ՎԱՉԱԳԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ 1

Դասագիրք հանրակրթական դպրոցի առաջին դասարանի համար

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Նկարիչ՝
ԽՈՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՆՄԱՐ
MANMAR
ԵՐԵՎԱՆ • 2022

ՀՏԴ 373.167.1+809.198.1 (075)
ԳՄԴ 81.2Հ g72
Ս 259

Սարգսյան Վ.
Ս 259 Մայրենի–1: Դասագիրք հանրակրթական դպրոցի 1-ին դաս.
համար / Վ. Սարգսյան – Եր.: ՄԱՆՄԱՐ, 2022. – 64 էջ:

ՀՏԴ 373.167.1+809.198.1 (075)
ԳՄԴ 81.2Հ g72

ISBN 978-9939-62-177-7

© Սարգսյան Վ., 2010
© ՄԱՆՄԱՐ, 2010

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ

ՀԱՅԵՐԵՆԻ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Սիրելի՛ փոքրիկ բարեկամ, դու արդեն կարողանում ես կարդալ և կարդում ես այս տողերը: Կեցցե՛ս:

Այս գիրքը կօգնի, որ դու ավելի շատ բան իմանաս, ավելի լավ գրես ու կարդաս: Սովորես ճիշտ խոսել, դառնաս հնարագետ ու սրամիտ:

Այստեղ դու կգտնես շատ ու շատ զարմանալի բաներ՝ հետաքրքրաշարժ նկարներ, հեքիաթներ, պատմություններ, հանելուկներ, առածներ, շուտասելուկներ, սուտասելուկներ, խաչբառեր, նկարելուկներ, խնդուկներ:

Ուրեմն թերթի՛ր այս էջը և մտի՛ր հայերենի կախարդական աշխարհը:

ԻՄ ԴԱՍԱԳԻՐՔԸ

Վահան Գրիգորյան

Երբ դպրոց տարավ
Ինձ իմ հայրիկը,
Ես ձեռքս առա
Իմ դասագիրքը՝

Գույներով պես-պես,
Նկարով լիքը.
Ես շատ սիրեցի
Իմ դասագիրքը:

Ահա՛ մեր ազատ,
Սուրբ հայրենիքը,
Որ ցույց է տալիս
Իմ դասագիրքը:

Հարցեր

1. Պատմի՛ր քո առաջին դասագրքի՝ «Այբբենարանի» մասին:

2. Պատմի՛ր՝ ինչ գիտես քո Հայրենիքի մասին:

3. Իսկ դու սիրո՞ւմ ես քո դասագիրքը: Ինչո՞ւ:

երբ, սուրբ

3 Հանելուկ

Ճիշտ է՝ խոսել
Նա չգիտի,
Բայց քո լեզվով
Քեզ հետ խոսում,
Շատ բաներ է
Նա քեզ ասում՝
Տանը լինես,
Թե դպրոցում:

1 ☐☐☐☐☐☐☐
2 ☐☐☐☐☐☐
3 ☐☐☐☐☐
4 ☐☐☐☐
5 ☐☐☐

1 *Որոշի՛ր՝ որ գծապատկերը որ առարկայի անվան համար է:*

2 *Գրի՛ր բառեր, որոնք կազմված են երկու տառից, երեք տառից, չորս տառից:*

4 **Բառը բառի մեջ**

Հայրենիք բառի մեջ կարող ենք կարդալ հայ, հայր, հայրենի, այր *բառերը:*

Դասագիրք բառի մեջ գտի՛ր յոթ բառ:

ԴՊՐՈՑԻ ՃԱՄՓԱՆ

Հովհաննես Թումանյան

Ձմեռվա բուքին,
Սառնամանիքին
Դպրոցի ճամփան
Դժվար է, երկար՝
Շատերի համար:

Ձվարթ գարունքին[1],
Երգին ու ծաղկին
Դպրոցի ճամփան
Կարճ է, դուրալի՝
Կարծես ավելի:

Իսկ ով սեր ունի
Մեզ պես ուսումի,
Դպրոցի ճամփան
Միշտ կարճ է, սիրուն՝
Ձմեռ թե գարուն:

Հարցեր

1. Ո՞Ի՛մ համար է դպրոցի ճամփան դժվար ու երկար: Ինչո՞ւ:
2. Ո՞Ի՛մ համար է դպրոցի ճամփան կարճ ու դուրալի: Ինչո՞ւ:
3. Իսկ ինչպիսի՞ն է դպրոցի ճամփան քե՛զ համար:
4. Նկարագրի՛ր ձեր տնից մինչև դպրոց ճանապարհը:

1 Կատակ տառհանելուկ

Թե դպրոցին դու նայես,
Առաջինն եմ այնտեղ ես,
Թե դասարան դու մտնես,
Սկզբում ինձ կգտնես:

[1] Գարունք — գարուն:

ճամփա, ձվարթ, երգ

2 Ո՞ր տառը պետք է դնել դատարկ վանդակում:

Ա	Բ	Գ
Դ	Ե	

Առած

Ծույլը հայ ուսուցիչս առողջ է, սովորելիս՝ հիվանդ:

Ո՞Վ Է ԲԵՐՈՒՄ ԳԱՐՈՒՆԸ

Վաս

– Գարունը ամպերն են բերում,– ասում է Արան:

– Գարունը անձրևներն են բերում,– ասում է Անին:

– Գարունը քամին է բերում,– ասում է Հայկը:

– Գարունը ծիծեռնակն է բերում,– ասում է Արմենը:

– Գարունը ծաղիկներն են բերում, – ասում է Վարդուհին:

– Գարունը արևն է բերում,– ասում է Արևիկը:

– Գարունը դո՛ւք եք բերում, իմ սիրելի՛ մանուկներ,– ասում է Արամ պապիկը,– դո՛ւք եք մեր գարունը:

Հարցեր

1. Քո կարծիքով՝ ո՞վ է բերում գարունը:
2. Բացատրի՛ր Արամ պապիկի ասածը:
3. Մեկնաբանի՛ր երեխաների ասածները:

արև, անձրև

1 Կարդա՛ և հիշի՛ր

Մարդկանց անունները, հայրանունները և ազգանունները գրվում են մեծատառով:

2 *Ընտրի՛ր ճիշտ պատասխանը:*

Գարունն սկսվում է փետրվարին, մարտին, ապրիլին:

3 *Գտի՛ր «ավելորդը».*

ամառ – 4	գարուն – 5
աշուն – 4	ձմեռ – 4

Մի աղյուսով տուն չես շինի:

Առած

Մի ծաղկով գարուն չի գա:

4 *Պատմի՛ր՝ ինչ ես տեսնում նկարում:*

ԱՐԱՅԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ

Վաս

– Արա՛, ծառի վրա տասը ծիտ կար: Որսորդ կատուն կրակեց: Ծտերի կեսը թռավ-փախավ: Ծառի վրա քանի՞ ծիտ մնաց:

– Ոչ մի ծիտ: Բոլորն էլ փախած կլինեն:

– Լա՛վ: Ծառի վրա տասը տա՛նձ կար: Քամին կեսը գցեց ցած: Ծառին քանի՞ տանձ մնաց: Տանձերն էլ հո չե՞ն կարող թռչել-փախչել:

– Ծառը բարձր է, լավ էլ չի երևում, ո՞նց հաշվեմ,– արդարացավ Արան:

Հարցեր

1. *Քո կարծիքով՝ ծառին քանի՞ ծիտ մնաց:*
2. *Քո կարծիքով՝ ծառին քանի՞ տանձ մնաց:*
3. *Բացատրի՛ր Արայի պատասխանները:*

ՌԱ ՔԵ ԾԱ ՇԱ

արդարանալ

1 Հետաքրքրաշարժ այբուբեն

Տառերի փոխարեն գրի՛ր դրանց անունները և կարդա՛: Ի՞նչ ստացվեց:

ՍԴ ԾՌ ՇՔ

Օրինակ՝ ՍԴ = Սեդա:

4 *Կազմի՛ր բառի վերջին երկու տառով սկսվող նոր բառ.*

ծառ, մաթեմատիկա, բոլոր, քանի, քամի:

Օրինակ՝ քանի – նիհար:

2 *Տառանունների փոխարեն դի՛ր համապատասխան տառերը և կարդա՛ նախադասությունը:*

Այբրեայբ, այբրեինի:

3 *Գտի՛ր տարբերությունները:*

ԱՆՆԱՆ ԵՎ ՍԱԳԻԿՆԵՐԸ

Վարազդատ Բագրևանդցի

Վարդը դիմեց
Աննային.
– Սագդ քանի՞
ճուտ ունի:
– Երեք դեղին
Ու մի սև
Շրջում են մայր
Սագի հետ,
Իսկ երկուսն էլ,
Տե՛ս, թաքուն
Լողանում են
Գետակում:
– Կամա՛ց խոսիր,
Ա՛յ Աննա,
Աղվեսն հանկարծ
Չիմանա:

վարդ, սև

Հարցեր

1. *Քանի՞ ճուտիկ ունի սագը:*
2. *Ո՞ր ճուտիկների մասին աղվեսը չպետք է իմանա: Ինչո՞ւ:*

3 *Գտի՛ր «ավելորդը».*
արծիվ, արագիլ, սագ, ագռավ, կաչաղակ:

1 **Խառնագիր**

Բառի տառերը խառնվել են: Վերականգնի՛ր բառը.
գսա, տճու, տգե, ամրյ, քեեր:
Օրինակ՝ ամրյ – մայր:

2 **Սուտասելուկ**

Ունեմ մի սագ՝ գարու չափ,
Ձու է ածում սարի չափ,
Երկու թևը թե բացի,
Գիշեր կգա՝ իմացի՛ր:

4 *Գտի՛ր, թե ինչ սխալներ կան նկարում: Ո՞րն է ճիշտը:*

ՇՈՒՆՆ ՈՒ ՀԱՎԸ

Երվանդ Պետրոսյան

Շունը հաչեց՝ հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ...
Մոտիկ եկավ մի սև հավ:

Ասաց՝ ի՞նչ ես դու կանչում,
Ինձնից ի՞նչ ես պահանջում:

Շունը լռեց, չկար ելք.
Ասաց՝ ա՜յ քեզ հավի խելք:

Կչկչալում մի հատ ես,
Բայց տառերը չգիտես:

Հեռո՛ւ գնա, անխե՛լք հավ,
Ես հաչում եմ ինձ համար:

Ես ասում եմ ոչ թե՝ հա՛վ,
Այլ, լավ լսիր՝ հա՛ֆ... հա՛ֆ... հա՛ֆ...

Հարցեր

1. *Ինչո՞ւ էին վիճում շունն ու հավը:*
2. *Ո՞վ էր նրանցից ճիշտ: Ինչո՞ւ:*

1

Ո՞ՐԸ ՈՐԻ՛ ՁԱՅՆՆ Է:

Շուն	ծուղրուղո՜ւ
Աքաղաղ	ծի՜վ-ծի՜վ
Ծիտիկ	տըկ-տըկ
Քամի	հա՛ֆ-հա՛ֆ
Ժամացույց	ո՜ւ-ո՜ւ
Հավ	կը՜չ-կը՜չ

2

Կարդա՛ և սովորի՛ր

Երբ տառը կարդալով արտասանում ենք, լսվում է այդ տառի հընչյունը: Երբ հնչյունը գրում ենք, ստացվում է այդ հնչյունի տառը:

3

Աջուձախ

Ահա տառեր՝ ա, ք, ճ, ք, ն:
Ահա բառեր՝ շուն, հավ, սուր, գիր, ստել:

Գտի՛ր, թե որ տառը որ բառի աջից կամ ձախից ավելացնելով՝ կստացվի նոր բառ:

Օրինակ՝ հավ+ք=հավք:

4 *Գտի՛ր «ավելորդը»:*

ԵՐԳՈՂ ԲԱՌԸ

Վաս

Լինում է, չի լինում՝ մի բառ է լինում: Այդ բառի տառերը ձանձրանում են լուռ մնալուց:

– Եկեք երգե՛նք,– ասում է տառերից մեկը:

– Ես երգել չգիտեմ,– տխուր ասում է թ-ն:

– Ինձ նման երգիր՝ ո՜ւ-ո՜ւ-ո՜ւ,– երգում է ու-ն:

– Թ՛, թ՛, թ՛,– չէ՛, չե՛մ կարող:

– Մ՛, մ՛, մ՛,– փորձում է մ-ն, չի կարողանում:

– Բ՛, բ՛, բ՛,– փորձում է բ-ն, չի կարողանում:

– Կ՛, կ՛, կ՛,– փորձում է կ-ն, չի կարողանում:

– Բոլորդ էլ բաղաձա՛յն եք, չե՛ք կարողանում երգել,– գայրանում է ու-ն: – Այս բառի մեջ ե՛ս եմ միակ ձայնավորը: Կարող եմ երգել՝ ո՜ւ-ո՜ւ-ո՜ւ:

Ո՞ր բառի տառերն էին փորձում երգել:

Ուրիշ ի՞նչ ձայնավոր է թաքնվել այդ բառի մեջ:



Հարցեր

1. Ինչո՞ւ է ու տառը կարողանում երգել:

2. Ինչ ես կարծում՝ մյուս տառերը երգել կսովորե՞ն:

1

Կարդա՛ և սովորի՛ր

Հայերենում կա 6 ձայնավոր հնչյուն՝ ա, է, ը, ի, ու, օ: Ձայնավոր հնչյունները գրելու համար օգտագործում ենք 8 տառ՝ ա, է, ե, ը, ի, ու, օ, ո:

2

Ասա՛ ձմռանը վերաբերող բառեր, որոնց մեջ լինի ու հնչյունը:

Օրինակ՝ չմուշկ:

3

Տառերը բաժանի՛ր երկու խմբի.

տ կ ա ու ց ն ի

4

Շարունակի՛ր

բարձր – **սար**

. . . .

. . . .

. . . .

5

Բառազույգ

Գտի՛ր՝ ո՛ր բառերն են «ընկերներ».

ամպ, գետ, երկինք, կամուրջ, այգի, կենդանի, միրգ, բույն:

Օրինակ՝ կենդանի – բույն:

ԱՆՁՐԵՎԸ

Վաս

Մի երիտասարդ անձրև, ամպին նստած, իր համար երգելով, գնում էր երկնքով:

– Մի քիչ ջուր կտա՞ս,– խնդրեց գետակը:

Անձրևը զարմացավ, որ գետակը խոսել գիտի ու ասաց.

– Ջուրն ի՞նչ ես անելու: Դու ջո՛ւր ես, էլի՛:

– Ես ջուրը տալիս եմ արտերին ու այգիներին, մարդկանց ու կենդանիներին: Իսկ մնացածը տանում-հասցնում եմ ծով: Իսկ ծովը քեզ նորի՛ց ջուր է տալիս,– ասաց գետակը:

Հարցեր

1. *Ինչ էր ուզում գետակն անձրևից:*
2. *Ինչո՞ւ էր գետակը ջուր խնդրում:*
3. *Քո կարծիքով՝ գետակն ի՞նչ լեզվով էր խոսում ամպի հետ:*
4. *Ի՞նչ նշանակություն ունի ջուրը մեր կյանքում:*

կենդանի, խնդրել, մարդ, անձրև

1 *Հաշվի՛ր՝ յուրաքանչյուր բառում քանի ձայնավոր կա.*

մի, ամպ, համար, գետակ, զարմանալ, կենդանի:

2 **Հետաքրքիր է**

Արևը ծովի ջուրը գոլորշացնում ու բարձրացնում է երկինք:

Ջուրը երկնքում ամպ է դառնում:

Հետո ամպի ջուրն անձրև է դառնում, թափվում գետնին ու նորից հոսում դեպի ծով:

3 *Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:*

ԳՐԻՉ

Հովհաննես Թումանյան

– Ի՞նչ կլինի, ասա՛, գրի՛չ,
Ինձ էլ սիրես գոնե մի քիչ:
Ինչո՞ւ իմ մեծ քրոջ ձեռքին
Գրում ես միշտ վարժ ու կարգին,
Իսկ իմ ձեռքին խազմզում ես
Սև ագռավի ճանկերի պես:
Ես քեզ վատ բան ի՞նչ եմ արել:
Ե՛կ, խնդրում եմ, ինձ համար էլ
Գրի՛ր էնպես արագ-արագ,
Էնպես ուղիղ, սիրուն, բարակ...
Գրիչը լուռ լսում, լսում,
Ճռճռում է ու խազմզում,
Բայց այս անգամ արդեն, կարծես,
Փոքրիկ ծտի ճանկերի պես:

Հարցեր

1. *Ինչո՞ւ է գրիչը մեծ քրոջ ձեռքին լավ գրում:*
2. *Ի՞նչ պիտի անի փոքր քույրը, որ լավ գրի:*
3. *Իսկ քո ձեռքին ինչպե՞ս է գրում գրիչը:*

1 *Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:*

խաչմ՛կել
ճռճռալ
անգամ

2 *Լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝* է *կամ* ե.

ռ□տին, □ոգել, □ժան, □թե, իհարկ□, գր□լ, գրում □, խնդրում □մ:

3 **Կարդա՛ և սովորի՛ր**

Երբ բառի մեջ և բառի վերջում լսում ենք է, որպես կանոն, գրում ենք ե տառը:

Օրինակ՝ մեխ, սեխ, մեկնել, որպե, գոնե, ափսե, հասցե:

ՏԱՌԸ

Կաս

Անին թռչուններ էր նկարել:

Նկարների տակ գրել էր՝ **արագիլ**, **ծիծեռնակ**, **կրունկ**:

– Ես չգիտեի, որ կրունկներն էլ են թռչում,– ծիծաղեց Սոնան:

– Ինչո՞ւ ես ծիծաղում,– զայրացավ Անին:

– Որովհետև ***կռունկնե՛ր*** են թռչում: Իսկ իմ ու քո ***կրունկները*** շա՜տ-շատ կարող են թռչկոտել:

– Մեկ չէ՞,– ասաց Անին: – Մի տառ է, էլի՜:

– Դե նայի՛ր, թե մի տառն ինչ կարող է անել,– ասաց Սոնան: – Հիմա ես բառը *ր*-ով կասեմ, իսկ դու այն դարձրու *ռ*-ով: Տե՛ս, թե ինչ կստացվի:

Դու լավ չես վարվում:

Գնացի սարը ջուր խմելու:

Այս տարի գեղեցկության մասին խոսել ենք:

Հարցեր

1. *Ինչո՞ւ էր ծիծաղում Սոնան:*
2. *Անին հասկացա՞վ իր սխալը: Բացատրի՛ր:*

1 *Գտի՛ր «ավելորդը»:*

2 Ենթադրենք՝ հանդիպել ես մի մարդու, որը չգիտի, թե ինչ է աքաղաղը: Այնպե՛ս նկարագրիր ու բացատրիր, որ հասկանա:

3 *Լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝* ր *կամ* ռ.

Կ□ունկը թռչում է:

Կ□ունկը ցավում է:

Գրի՛ր մի տա□:

Հեռախոսը մի՛ տա□:

Լու□ տո՛ւր:

Լու□ լսի՛ր:

4 Պատմությունից արտագրի՛ր բառեր, որոնք սկսվում են ա, բ, գ, դ, ե, զ տառերով:

ՀՐԱՇԱԳՈՐԾԸ

Վաս

– Մի հրաշագործ է հայտնվել անտառում,– շունչը հազիվ տեղը բերելով, ասաց Վինի Թուխը:

– Ինչի՞ց է երևում, որ հրաշագործ է,– հետաքրքրվեց Դնչիկը:

– Կախարդական փայտիկ ունի. ծաղիկը դարձնում է թիթեռ, քարը՝ գնդակ, մորին՝ ձմերուկ: Ի՜նչ ուզում անում է:

– Դա ի՞նչ է, որ,– ասաց Բուն: – Ես կարող եմ ջուրը կրակ դարձնել:

– Ինչպե՞ս:

– Տեսեք, *ջուր* բառի մեջ ընդամենը մի տառ եմ փոխում՝ *ջ*-ն դարձնում եմ *հ*: Ստացվում է *հուր*: Իսկ հուրը, ինչպես գիտեք, կրակն է:

– Ա՜յ քեզ հրաշք,– զարմացան Թուխն ու Դնչիկը:

Իսկ դուք, սիրելի՛ երեխաներ, կարո՞ղ եք *մարդ*-ը դարձնել ծաղիկ:

երևալ, դարձնել

Հարցեր

1. Ի՞նչ էր անում Վինի Թուխի տեսած կախարդը:

2. Բուն ջուրը ինչպե՞ս դարձրեց կրակ:

3. Եթե դու կախարդական փայտիկ ունենայիր, ի՞նչ կանեիր:

1

ԴԱՐՁԳԻՐ

Որ կողմից կարդաս՝ նույնն է:

Մենակ կատակ կանեմ:
Տաճատ, սո՜ւս, Տաճատ:
Արա՛, մուծում արա:

2

Կարդա՛ և հիշի՛ր

Մեծատառով են գրվում նաև կենդանիներին տրվող հատուկ անունները:

3

Կարդա՛ և սովորի՛ր

Երբ բառի սկզբում լսում ենք է հնչյունը, որպես կանոն, գրում ենք է տառը:

Հայերենում է-ով սկսվող քիչ բառեր կան. էմին, էրեբունի, էջմիածին, էջ, էշ, էլի և այլն:

ԾԱՌԻ ԽՆԴՐԱՆՔԸ

Պատվական Խաչատրյան

Մի՛ կոտրատիր իմ ճյուղերը,
Որդիներն են նրանք իմ հեզ,
Ես այնպես եմ սիրում նրանց,
Ինչպես մայրդ սիրում է քեզ:

Տերև անգամ եթե պոկես,
Սիրտս ցավից կմղկտա[1],
Թե որ դու ինձ չպահպանես,
Պատրաստի ծառ քեզ ո՞վ կտա:

Հարցեր

1. Պատմի՛ր, թե ինչ է խնդրում ծառը:

2. Դո՞ւ ինչպես ես վարվում: Պատմի՛ր:

ծյուղ, որդի, տերև

1 *Ո՞ր բառերն են «ընկերներ».*

ծառ, մղկտալ, դաշտ, սիրտ, որդի, ճյուղ, մայր, խոտ:

2 *Բառերը «թափվում» են ներքև: «Հավաքի՛ր» ու կազմի՛ր ճիշտ նախադասություն:*

մեր
բակի
եմ
խնամում
Ես
ծառերը:

3 Պատասխանը հարցի մեջ

Ի՞նչ ծաղիկ ստացավ Ալվարդը:
Ի՞նչ միացրեց Արշալույսը:
Ո՞Ի՞Ր գնաց Սարոն:
Աղասին ի՞նչ էր մոռացել գցել ճաշի մեջ:
Օրինակ: Ո՞Ի՞Ր գնաց Արտաշեսը (արտ):

4 *Կենդանիների անունները գրի՛ր տետրում: Սկզբում գրի՛ր ա-ով սկսվողը, հետո՝ բ-ով, գ-ով, դ-ով, ե-ով և զ-ով:*

[1] *Մղկտալ — խոր ցավ զգալ, դառնապես լալ:*

ՄԱՐՏ

Հովհաննես Թումանյան

Ա՜խ, էսպես էլ գիժ ամիս.
Մարդու հանգիստ չի տալիս:
Էսօր ուրախ օր կանի,
Վաղը՝ անձրև ու քամի,
Առավոտը՝ պայծառ օդ,
Կեսօրը՝ մութ ու ամպոտ:
Մին հագնում է սպիտակ,
Մին կանաչին է տալիս,
Մի օր ցուրտ է, մի օր՝ տաք,
Մին խնդում է, մին՝ լալիս...
Ա՛խ, էսպես էլ գիժ ամիս:

Հարցեր

1. Ինչո՞ւ է մարտը «գիժ»:

2. Ինչո՞ւ մարտը մեկ սպիտակ է, մեկ՝ կանաչ:

3. Պատմի՛ր՝ քո բնակավայրում գարունն ինչպես է գալիս:

✍ *կեսօր, օդ*

1 Փոխակերպում

Բառերի մեջ մի-մի տառ փոխելով՝ հեշտ է քար-ից հաց ստանալ.

քար – լար – լաց – հաց:

Այժմ դու մարտ-ից ստացի՛ր վարդ.

մարտ – մար□ – վարդ:

3 Պատասխանը հարցի մեջ

Ծառան ի՞նչ մոռացավ ջրել:
Պատվականը ի՞նչ է շարում:
Գարեգինը քանի՞ տարեկան է:
Անուշն ի՞նչ է ամենից շատ սիրում:
Ո՞վ է նորոգել աթոռը:

2 Հանելուկ

Առանց թևի թռչում են,
Երկինք-գետին թրջում են,
Նրանց մոտից թե նայես,
Մարդիկ կարծես մրջյուն են:



4 Նկարագրի՛ր

Պատկերացրո՛ւ, որ հանդիպել ես մի մարդու, որը չգիտի, թե ինչպիսին է մարտ ամիսը: Բացատրի՛ր նրան որքան հնարավոր է մանրամասն:

ԻՄ ԸՆՏԱՆԻՔԸ

Պատմի՛ր՝ ինչ ես տեսնում նկարում:

Ո՞Վ Է ԱՄԵՆԻՑ ՇՈՒՏ ԱՐԹՆԱՆՈՒՄ

Վաս

– Արևն է ամենից շուտ արթնանում,– ասաց Արևիկը:

– Ծառն է ամենից շուտ արթնանում,– ասաց Սոսին:

– Ծովն է արթնանում: Նա չի էլ քնում,– ասաց Ծովինարը:

– Թռչուններն են ամենից շուտ արթնանում,– ասաց Արծվիկը:

– Ծաղիկներն են ամենից շուտ արթնանում,– ասաց Վարդուհին:

– Ո՛չ,– ասաց Նարեն: – Մայրիկնե՛րն են ամենից շուտ արթնանում ու մեզ արթնացնում:

Հարցեր

1. Քո կարծիքով՝ երեխաներից ով էր ճիշտ:

2. Ըստ քեզ՝ ով է ամենից շուտ արթնանում:

3. Երեխաների անունները համեմատի՛ր շուտ արթնացողների հետ:

2 *Դու արդեն գիտես, թե ինչպես է հընչում* **ե** *տառը բառի սկզբում, բառի մեջ և բառի վերջում:*



Բառերը գրի՛ր տետրում:



1 *Բառերի մասերը ճիշտ միացրո՛ւ իրար և ստացի՛ր բառեր: Բառերը գրի՛ր տետրում:*

3

Շուտասելուկ

Բացի դեղձի չրից, ցրիչին տուր սառը ջրից:

4 *Քանի՞ երեխա կա պատմության մեջ:*

Ո՞վ խոսեց առաջինը: Ո՞վ խոսեց վերջինը: Ո՞վ էր երկրորդը:

Ո՞ՒՄ ԵՄ ԱՄԵՆԻՑ ՇԱՏ ՍԻՐՈՒՄ

Մարո Աբրահամյան-Թաթիկյան

Մի օր Վահրամն ասաց.

– Չեմ սիրում, երբ ինձ հարցնում են. «Ամենից շատ ո՞ւմ ես սիրում»:

Ես ամենից շատ մայրիկի՛ս եմ սիրում:

Ես ամենից շատ հայրիկի՛ս եմ սիրում:

Ես ամենից շատ քույրիկի՛ս եմ սիրում:

Ես ամենից շատ տատիկի՛ս ու պապիկի՛ս եմ սիրում:

Այդպիսի հարցեր ինձ մի՛ տվեք:

Ես ամենից շատ ամենքի՛ն եմ սիրում:

Հարցեր

1. Ովքե՞ր են Վահրամի ընտանիքի անդամները:

2. Ո՞ՒՄ է ամենից շատ սիրում Վահրամը:

3. Դու համաձա՞յն ես Վահրամի հետ: Ինչո՞ւ:

Առած

Հիշիսարիում ամեն բան կեսարվի, բացի հորից ու մորից:

2 *Արտագրի՛ր՝ լրացնելով բաց թողնված տառերը.*

տեսնում □մ, լսում □նք, խոսում □, վազում □ս:

1 **Կարդա՛ և սովորի՛ր**

Բառի սկզբում ե տառը կարդացվում է յէ: Միայն եմ, ես, ենք, եք, են բառերում է, որ բառասկզբի ե-ն կարդացվում է է:

Օրինակ՝ խոսում եմ, խոսում ես և այլն:

3 *Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:*

ՍԻՐՈՒՄ ԵՄ

Էդվարդ Միլիտոնյան

Մայրիկին սիրում եմ,
Հայրիկին սիրում եմ,
Սիրում եմ նրանց,
Ա՜յ, այն ամպի չափ:
Երբ որ անձրև գա,
Ամպը չքանա[1],
Կսիրեմ նրանց
Ծիածանի չափ:
Երբ ծիածանն էլ
Հոգնի ու գնա,
Կսիրեմ նրանց
Ա՜յն երկնքի չափ:

Հարցեր

1. Նկարագրի՛ր քո մայրիկին. պատմի՛ր, թե ինչպիսին է նա:

2. Նկարագրի՛ր քո հայրիկին. պատմի՛ր, թե ինչպիսին է նա:

1 Կարդա՛ և հիշի՛ր

Բառի սկզբում ո տառը կարդացվում է վօ: Միայն ով, ովքեր բառերում է բառասկզբի ո-ն կարդացվում օ:

2 *Ասա՛ ընտանիքին վերաբերող բառեր:*

3 *Գտի՛ր, թե ինչ սխալներ կան նկարում:*

Ո՞րն է ճիշտը:

[1] *Չքանալ* — վերանալ, կորչել, անհետանալ:

4 *Տառհանելուկ*

Սարը կողքին՝ ՍԱՐՈ է,
Կարը կողքին՝ ԿԱՐՈ է,
Բառամիջում նա Օ է,
Իսկ սկզբում միշտ ՎՕ է՝
Բացի մեկից: Նա Ո՞Վ է:

Ո = ՍԱՐՈ

5 *Ո՞ր բառերն են «ընկերներ».*

քնքուշ, գույնզգույն, ուժեղ, հայրիկ, մայրիկ, ծիածան:

☺ Խնդուկ

Առաջին դասարանցի Կարենը ջերմություն ուներ:

– Կարենին տո՛ւն տարեք, մայրիկին ասե՛ք, թող դեղ տա:

– Դեղ պետք չէ՛. մայրիկին որ տեսնեմ, կառողջանամ,– ասում է Կարենը:

ՕԳՆԵԼ ՈՒ ՀՈԳՆԵԼ

Էդվարդ Միլիտոնյան

Մայրիկին օգնում եմ,
Օգնելուց հոգնում եմ,
Հոգնելուց նստում
Ու նստած երգում եմ:

Եվ այնքան եմ երգում,
Որ երգից հոգնում եմ,
Ու նորից ելնում,
Մայրիկին օգնում եմ:



Հարց

Դու ինչպե՞ս ես օգնում մայրիկիդ:

3 *Քանի՞ տառ և քանի՞ հնչյուն կա հետևյալ բառերից յուրաքանչյուրում.*

երեխա, երեկ, մեխակ, երբեք:

1

Կարդա՛ և սովորի՛ր

Ինչպես հիշում ես, ե-ն և ո-ն բառի սկզբում երկու հնչյունի նշան են՝ ե = յ + է, ո = վ + օ:

Այժմ հաշվի՛ր, թե քանի տառ ու քանի հնչյուն ունի այս բառերից ամեն մեկը. երկիր, ոսկոր, երես, ոլորան, երեկո, ոլորել:

Օրինակ՝ երեկո – 5 տառ, 6 հնչյուն:

Խնդրվակ

Լուսինեն առաջին դասարանում բոլոր տառերը սովորելուց հետո մայրիկին ասաց.

- Մայրի՛կ, ես բոլոր տառերը, թվերը արդեն սովորել եմ. էլ ինձ դպրոց մի՛ տար: Ես տանը կմնամ ու մեր տան բոլոր գրքերը կկարդամ:

Ի՞նչ կարծիք ունես Լուսինեի ասածի մասին:



2 *Պատմի՛ր քո ընտանիքի մասին:*

4 *Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:*

ԻՆՉԸ ՕԳՆԵՑ ՄԱՅՐԻԿԻՆ

Լիպարիտ Սարգսյան

Մայրիկն աշխատանքից տուն եկավ և անմիջապես անկողին մտավ:

– Մայրի՛կ, հիվա՞նդ ես,– հարցրեց Աստղիկը:

– Այո՛,– թույլ-թույլ ասաց նա:

Աստղիկը շոյեց մայրիկի ձեռքերը: Համբուրեց ճակատն ու այտերը և ասաց.

– Ջերմություն չունես:

Հետո գնաց իր սենյակը և տիկնիկներին ու խաղալիքներին ասաց.

– Ձայն չհանե՛ք, մայրիկս հիվանդ է:

Վերադառնալով մայրիկի մոտ՝ ասաց.

– Թեյ կուզե՞ս:

Մայրիկը լսեց Աստղիկի ասածները և ժպտալով ասաց.

– Ո՛չ, աղջիկս, արդեն լավացա:

Հարցեր

1. Արդյոք ի՞նչը այդքան արագ օգնեց մայրիկին:

2. Պատմի՛ր՝ դու ինչպես ես վարվում, երբ մայրիկդ հիվանդ է:

1 *Դու արդեն գիտես, թե ինչպես է հնչում* **ո** *տառը բառի սկզբում, բառամիջում և բառի վերջում.*



2

Կարդա՛ և սովորի՛ր

Երբ բառի մեջ և բառի վերջում լսում ենք ո հնչյունը, որպես կանոն, գրում ենք ո տառը:

Օրինակ՝ խոսք, այո, կինո, հետո, որսորդ, զրո, խոհանոց, լողորդ, Սիմոն:

3 *Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:*

ԹՈՌՆ ՈՒ ԱԹՈՌԸ

Գուրգեն Գաբրիելյան

Տատիկն ուներ
Մի լավ թոռ,
Մեկ էլ՝ կոտրած մի աթոռ:
– Գնամ,– ասաց,–
Բերեմ այսօր վարպետին.
Որ նորոգի աթոռս,
Վրան նստի լավ թոռս:
Գնաց, մնաց
Նա երկար...
Բայց երբ արդեն
Տուն եկավ,
Նորոգված էր աթոռը,
Ու քրտնած էր ժիր թոռը:

Հարցեր

1. *Ո՞Ի՞ր գնաց տատիկը: Ինչո՞ւ:*
2. *Ինչո՞ւ էր քրտնել ժիր թոռը:*
3. *Դու կարողանո՞ւմ ես կոտրած խաղալիքները նորոգել:*



1 **Խառնագիր**

Բառի տառերը խառնվել են: Վերականգնի՛ր բառը.

վլա, եկմ, ուտն, իժր, թռոա:

Օրինակ՝ թռոա – աթոռ:

2 *Քանի՞ տառ և քանի՞ հնչյուն կա հետևյալ բառերից յուրաքանչյուրում.*

թոռ, աթոռ, երկար, եկավ, որսորդ, ով, վարպետ:

Օրինակ՝ եկավ (4 տառ, 5 հնչյուն)

3 *Բանաստեղծությունից արտագրի՛ր այն բառերը, որոնց մեջ կան* **ե** *և* **ո** *տառերը:*

4 *Քանի՞ որսորդ կա նկարում: Ինչո՞ւ:*

ՄԵԾԱՆՈՒՄ ԵՄ

Գուրգեն Գաբրիելյան

Ամբողջ օրը անձրև էր գալիս: Արմենը չէր կարողանում ո՛չ հեծանիվ քշել, ո՛չ գնդակ խաղալ, ո՛չ էլ ընկերների հետ վազվզել:

– Ի՜նչ անպետք անձրև է,– զայրացավ Արմենը:

– Անձրևը չի կարող անպետք լինել,– բացատրեց տատիկը: – Անձրևի շնորհիվ են մեծանում ծառ ու ծաղիկները: Առանց անձրևի ոչինչ չի կարող աճել, մեծանալ:

Արմենը մի պահ մտածեց ու դուրս վազեց:

Տատը պատուհանից նայեց ու տեսավ, որ Արմենն անշարժ կանգնել է անձրևի տակ: Զարմացած կանչեց.

– Արմե՛ն, ինչո՞ւ ես կանգնել անձրևի տակ:

– Մեծանո՜ւմ եմ, տատի՛կ, մեծանո՜ւմ:

ամբողջ, շնորհիվ

Հարցեր

1. *Ինչո՞ւ էր զայրացել Արմենը:*
2. *Տատիկն ի՞նչ բացատրեց անձրևի մասին:*
3. *Արմենը ճի՞շտ հասկացավ տատիկի բացատրածը:*

2

Առաջին տառը

Փոխելով **տատ** բառի առաջին տառը՝ ստացի՛ր նոր բառեր:

Օրինակ՝ դատ, հատ:



1

Ենթադրենք՝ հանդիպել ես մի մարդու, որը չգիտի, թե ինչ է անձրևը: Այնպես բացատրի՛ր, որ հասկանա:

ՄԵ՞Ծ ԵՄ, ԹԵ՞ ՓՈՔՐԻԿ

Սուրեն Մուրադյան

Երբ ձեռքերս չեմ լվանում,
Ինձ ասում են՝ լվացվի՛ր,
Մեծը երբեք չի ծուլանում,
Արդեն մե՛ծ ես, իմացի՛ր:
Թե քույրիկս թատրոն գնա,
Ինչքան խնդրեմ՝ չի՛ տանի.
Ինձ կասի՝ դու տա՛նը մնա,
Փոքրիկ ես դեռ, չեն թողնի:
Հենց որ ժամը ութն է լինում,
Ինձ ասում են՝ քնի՛ր, շո՛ւտ,
Փոքրիկները շուտ են քնում,
Տե՛ս, դրսում ինչ մութ է, մո՜ւթ...
Մեկն ասում է՝ մե՜ծ ես արդեն,
Մեկն ասում է՝ փո՜քր ես շատ.
Մե՞ծ եմ, ասե՛ք, թե՞ փոքր եմ դեռ,
Ո՞նց իմանամ ես հաստատ...



Հարցեր

1. Քո կարծիքով՝ ո՞ւմ մասին է բանաստեղծությունը:

2. Արդյոք մե՞ծ, թե՞ փոքր է նա:

3. Դու քեզ մե՞ծ ես համարում, թե՞ փոքր: Հիմնավորի՛ր:

Առած

Խոսքը՝ մեծին, գործը՝ փոքրին:

երբեք, խնդրել

Խնդուկ

Փոքրիկ երեխային հարցնում են.

– Քանի՞ տարեկան ես:

– Շուտով կդառնամ ութ, իսկ հիմա երեք եմ:

1 Հետաքրքրաշարժ աշտարակ

Ե տառը տեղադրի՛ր բառի սկզբում և բառամիջում:

Տեղում գրի՛ր ստացված բառերը և կարդա՛ դրանք: Տեսնո՞ւմ ես՝ Ե-ն բառի սկզբում հընչում է յ+է, իսկ բառամիջում՝ է:

	Ր		Կ		
	Ր		Ք		
	Ր		Ս		
	Ր		Խ	Ա	
	Ր		Կ	Ո	
	Ր		Ս	ՈՒ	Ն

ԻՆՉ ԿԱ ՈՐ

Վաս

– Դու նորից առանց գլխարկի դուրս վազեցիր այս ցրտին,– ասաց մայրը Գևորգին:

– Ի՛նչ կա որ,– պատասխանեց Գևորգը:

– Դասի ժամանակ դարձյալ շատախոսե՞լ ես:

– Ի՛նչ կա որ:

– Նորի՞ց ասացիր՝ ի՛նչ կա որ:

– Ի՛նչ կա որ:

Գևորգը քնեց ու երազ տեսավ:

Երազում հանկարծ հանդիպեց մի իշուկի:

«Իշուկը հա՛ֆ-հա՛ֆ է անում»,– զարմացած մտածեց Գևորգը:

– Ի՛նչ կա որ,– պատասխանեց իշուկը:

«Շունը ծուղրուղու է կանչում»:

– Ի՛նչ կա որ,– ասաց շունը:

«Խոզը մլավում է»:

– Ի՛նչ կա որ,– ասաց խոզը:

Գևորգը վախից արթնացավ ու այլևս չասաց՝ ի՛նչ կա որ:

Հարցեր

1. Ինչո՞ւ էր Գևորգը բոլոր հարցերին պատասխանում՝ ի՛նչ կա որ:

2. Գևորգն ինչպե՞ս ազատվեց այդ վատ սովորությունից:

3. Ինչո՞ւ չի կարելի այդպես վարվել:

Առած

Մի՛ ասա, որ չլսես:

1

Վանկախաղ

Բառերի վանկերը խառնվել են: Վերականգնի՛ր բառերը և առանց վանկատելու գրի՛ր տետրում:

նի տակ վը զե

տուր ըն թը կեր կը

2 *Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:*

ԱՐՋԻ ԸՆԿԵՐԸ

Արմեն Շեկոյան

Թոռնիկն ասաց պապիկին.
– Որ արջ տեսնես, ի՞նչ կանես:
Պապիկն ասաց. – Շուռ կգամ
Ու վազելով տուն կգամ:
Թոռնիկն ասաց. – Ի՞նչ կանես,
Թե ոչ մի տուն չգտնես:
Պապիկն ասաց. – Ա՛յ Պայծառ,
Կմագլցեմ ես մի ծառ:
Թոռնիկն ասաց. – Ի՞նչ կանես,
Եթե ծառ էլ չգտնես:
Պապիկն ասաց. – Ա՛յ աղջիկ,
Ի՞մ ընկերն ես, թե՞ արջի:



Հարցեր

1. Դո՛ւ պատասխանիր Թոռնիկի հարցերին:

2. Քո կարծիքով՝ Թոռնիկն ո՞ւմ ընկերն էր՝ պապիկի՞, թե՞ արջի:

3. Օգնի՛ր պապիկին՝ արջից ազատվելու հնարներ մտածիր:

2 *Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:*

1 Հետաքրքրաշարժ աշտարակ

Ո տառը տեղադրի՛ր բառի սկզբում և բառամիջում: Տեսրում գրի՛ր ստացված բառերը և կարդա՛ դրանք: Տեսնո՞ւմ ես՝ ո-ն բառի սկզբում հնչում է վ+օ, իսկ բառամիջում՝ օ:

	Ր		Տ		
	Լ		Ր		
	Ս		Խ		
	Ր		Շ	ՈՒ	Մ
	Ր		Ն	Ե	Լ
	Ղ		Ղ	Ե	Լ

ՔԱՂԱՔԱՎԱՐԻ ՏՂԱՆ

Ս. Պոգորելովսկի

Բոլորն արդեն քնել էին:

Հանկարծ Վահանն արթնացավ և ձայն տվեց մայրիկին:

Մայրիկը վախեցած վեր թռավ ու հարցրեց.

– Ի՞նչ է պատահել, Վահա՛ն:

– Ոչի՛նչ, մայրիկ:

– Քեզ վա՞տ ես զգում:

– Ո՛չ:

– Վատ երա՞զ ես տեսել:

– Ո՛չ:

– Իսկ ինչո՞ւ արթնացրիր:

– Մոռացել էի քեզ **բարի գիշեր** ասել:

Հարցեր

1. Ինչո՞ւ վախեցավ մայրիկը:

2. Վահանը ինչո՞ւ արթնացրեց մայրիկին:

3. Ճի՞շտ վարվեց Վահանը:

3

Կարդա՛ և սովորի՛ր

Բարի-ն բառ է: Լույս-ը բառ է:

Բարի լույս-ը բառակապակցություն է:

1

Կարդա՛ և հիշի՛ր

Արթնանալուց հետո բոլորին ասա՝ բարի լույս:

Քնելուց առաջ բոլորին ասա՝ բարի գիշեր:

4

Քեզանից մեծերին դիմի՛ր այս բառերով.

պապիկ, տատիկ, տիկին, օրիորդ, մորաքույր, պարոն, քեռի, ընկեր, տիար, մայրիկ, հայրիկ:

Ասա՝ ում ինչպես ես դիմում դու:

2 *Գտի՛ր տարբերությունները:*

ԼԵՎՈՆԻ ԼՈՂԱԼԸ

«Ծիծեռնակից»

Լևոնը հիվանդ պառկած էր: Հանկարծ լսեց, որ ընկերները կանչում են.

– Լևո՛ն, Լևո՛ն, գնանք լողալու:

Լևոնը լողալ շատ էր սիրում: Իսկույն մոռացավ հիվանդությունը և ընկերների հետ վազեց լողալու: Երբ տուն դարձավ, մայրիկը բարկացավ.

– Ինչո՞ւ ես գնացել լողալու. չէ՞ որ փորդ ցավում էր:

– Մայրի՛կ, ազնիվ խոսք, ես միայն մեջքիս վրա էի լողում,– արդարացավ Լևոնը:

Հարցեր

1. Լևոնն ինչպե՞ս մոռացավ իր հիվանդ լինելը:

2. Նա ինչպե՞ս արդարացավ մայրիկի առաջ:

3. Ի՞նչ ես կարծում՝ Լևոնն ա-ռողջացա՞վ:

1 *Թվի՛ր՝ ինչը կարող է լողալ ջրում:*
Օրինակ՝ սագը, փայտը:

3 *Ո՞ր բառերն են «հակառակորդներ».*
հիվանդ, գնալ, ազնիվ, գալ, քիչ, առողջ, շատ, անազնիվ:
Օրինակ՝ շատ – քիչ:

2 *Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:*

ԿԾԱԾ ԽՆՁՈՐ

Արմեն Շեկոյան

Այս ի՞նչ կծած խնձոր է
Մեր ծառին աճել:
Տեսնես ո՞վ չի համբերել.
Ախր, դեռ խակ է:

Պարզեցինք, որ Հովիկն է
Այդ անհամբերը.
Կատարել է ճիշտ և ճիշտ
Տատի պատվերը:

Տատն ասել է Հովիկին.
– Պետք է համբերես,
Մինչև կարգին չհասնի,
Խնձոր չքաղես:

Հովիկը հասկացել,
Լսել է նրան.
Խնձորը չի քաղել,
Կծել է միայն:

համբերել

Հարցեր

1. *Ինչո՞ւ Հովիկը խնձորը չէր քաղել:*
2. *Ինչո՞ւ չի կարելի խակ միրգ ուտել:*

1

Ո՞ր բառերն են «հակառակորդներ».

խակ, չարաճճի, համբերատար, երիտասարդ, հասած, ծեր, խելոք, անհամբեր:

2

Ընտրի՛ր ճիշտ բառազույգը

փայտե
խելոք
մաքուր
ձյունե

ապակի

3

Նկարագրի՛ր

Ի՞նչ գիտես խնձորի մասին:

Պատմիր այնպե՛ս, կարծես լսողներից ոչ մեկը չգիտի, թե ինչ է խնձորը:

4

Բառերը ճիշտ տեղադրի՛ր և բանաստեղծությունն արտագրի՛ր տետրում:

. . . . . եմ քեզ, — պես
Հայոց . . . . . , — լեզու
Մայրիկիս . . . — Սիրում
. . . . ես դու: — Անուշ

ԿԱՐԾՈՒՄ ԵՔ, ԹԵ ԿԱՏԱ՞Կ Է

Միլվա Կապուտիկյան

Այսօր ուրիշ է կարգը.
Ե՛ս եմ մաքրել հատակը:
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, ի՞նչ արիք,
Սենյակ ինչո՞ւ ոտք դրիք:
Տեղներումդ քարացե՛ք,
Նորից շարժվել չփորձե՛ք:
Ջուր չխմե՛ք,
Կկաթի:
Հաց-մաց չուտե՛ք,
Կթափվի:
Լուսամուտը չբացե՛ք,
Փոշի կգա, իմացե՛ք:
Ոչ ոք ուժեղ չշնչի,
Թե չէ փայլը կկորչի:
Ի՞նչ է, մաքրել հատակը,
Կարծում եք, թե կատա՞կ է...

Հարցեր

1. Ինչո՞ւ է փոքրիկ աղջիկը դարձել մաքրասեր ու պահանջկոտ:

2. Դու օգնո՞ւմ ես մայրիկիդ: Ինչպե՞ս:

1 Ընդհանուր անվանում

Մեխակը, վարդը, շուշանը, նարգիզը, անմոռուկը ***ծաղիկներ*** *են:*

Տանձը, խնձորը, ծիրանը, խաղողը, բալը, կեռասը .... են:

2 Նույնտառիկներ

Յուրաքանչյուր բառի բոլոր տառերով կազմի՛ր նոր բառ.

կում, առած, շիվ, վիճակ, մական:

Օրինակ՝ վիճակ – կավիճ:

3 Առաջին տառը

Փոխելով ջուր *բառի առաջին տառը՝ ստացի՛ր նոր բառեր:*

Օրինակ՝ հուր, դուր:

4 Ո՞ր բառերն են «ընկերներ»:

Գտի՛ր և գրի՛ր տետրում:

Ապակի, ձմեռ, ալյուր, լուսամուտ, գիրք, հաց, տառ, ջուր, ձյուն, ձուկ:

Օրինակ՝ հաց – ալյուր:

Ասացվածք

Հիրաժիր Մասին շատ
Մի խոսիր:

ՇՆԻԿԸ

Հենրիկ Սևան

Ձյուն էր գալիս. շնիկները
Խաղում էին դրսում,
Ուտում էին ձյան փաթիլներ,
Կարծես չէին մրսում:

Թռչկոտելիս սև շնիկը
Ոտքը խփեց քարին,
Բայց լաց չեղավ շների մոտ՝
Ամբողջ ճանապարհին:

Ձմռան ցրտին նա կաղալով
Հազիվ բույնը հասավ
Ու լաց եղավ հոնգուր-հոնգուր,
Հենց որ մորը տեսավ:

Հարցեր

1. *Ինչո՞ւ շնիկը լաց չեղավ ճանապարհին:*
2. *Ինչո՞ւ շնիկը լացեց՝ մորը տեսնելիս:*

ձյուն, բույն

1

Նկարին նայելով՝ ասա՛, թե որ բառը ում համար ենք գործածում.

դեմք	մաշկ	բերան	ոտքեր	ձեռքեր
մռութ	կաշի	երախ	թաթեր	թևեր
	բուրդ	կտուց		լողաններ
	փետուր			



2 Հանելուկ

Իջնում է նա
Հեզիկ-նազիկ
Թևիկներին՝
Աղվամազիկ,
Սառն է, թեթև,
Ունի վեց թև:

3 Հանելուկ

Հավատարիմ ընկեր է,
Տանը պահակ ու տեր է,
Վազվզելուց չի հոգնում,
Իր տիրոջն է միշտ օգնում:

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է

Պատմի՛ր՝ ինչ ես տեսնում նկարում:

Հայաստան ասելիս ակամա ոտքի եմ կանգնում:

– Մեզ մի՛ կոտորիր,– ասաց ծերունին, քո թշնամին Մսրա Մելիքն է:

– Մելի՛ք, դո՛ւրս արի կռվենք,– ասաց Դավիթը: Մելիքը փչեց, որ Դավթին թռցնի:

Մելիքը Դավթին խաբեց, գցեց հորը: Վրան դրեց քառասուն ջաղացի քար:



Ձենով Օհանը ձայն տվեց Դավթին: Ձայնը, սարեր-ձորեր անցնելով, հասավ Դավթին:

Դավիթը դուրս թռավ հորի միջից: Մելիքը շատ վախեցավ:

Առաջինը Մելիքը խփեց Դավթին: Յոթ օր ու գիշեր երկինքը փոշի էր բռնել:

– Դավի՛թ, մի զարկդ ինձ բաշխի՛ր,– ասաց Մելիքի մայրը:

Դավիթը Թուր Կեծակիով խփեց հորի մեջ թաքնված Մելիքին, մեջտեղից կիսեց:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Պատվական Խաչատրյան

Դու հնաբա՛ռ,
Մեսրոպատա՛ռ,
Աղբյուրի պես
Ջինջ ու կայտա՛ռ:
Դու մոր նման
Միշտ տուն կանչո՛ղ,
Մայր հողի պես
Միշտ կանաչո՛ղ:
Դու այնպես կո՛ւռ[1],
Այնպես անբի՛ծ[2],
Եվ ինչ լավ է,
Հասել ես ինձ:
Թե կորչեիր
Հանկարծ անհետ[3],
Ինչպե՞ս խոսեր
Մայրս ինձ հետ:

Հարցեր

1. Ինչի՞ հետ է համեմատվում հայոց լեզուն բանաստեղծության մեջ:

2. Հայոց լեզուն ինչպե՞ս է հասել մեզ:

աղբյուր, անբիծ

1 *Գտի՛ր՝ ինչ բառեր են գրված:*

Հո

այ

այերեն

այաստան

այրենիք

2 *Այնպե՛ս պատասխանիր, որ բոլոր պատասխաններն սկսվեն ա-ով:*

Ո՞ր դասարանում ես սովորում:
Դու կարդալ սիրո՞ւմ ես:
Ե՞րբ է շոգ լինում:
Գիշերը ի՞նչ չես տեսնում երկնքում:

3 Պատասխանը հարցի մեջ

Ի՞նչ կարելի է պատրաստել կոճղից:
Ի՞նչ էր քսվել մուրճի կոթին:
Կլոր ընից ի՞նչ թռչուն թռավ:
Ընթրիքի ժամանակ ի՞նչ կոտրվեց:

Օրինակ: Լիքը կուժը բարձրացնելու համար ի՞նչ է պետք:
Պատասխան՝ ուժ:

Հայոց լեզվի մասին ասել են.

Հայի համար հայոց լեզուն այն է, ինչ որ մարտի գնացող զինվորի համար՝ զենքը:

[1] *Կուռ — ամուր, հաստատուն:*
[2] *Անբիծ — անարատ, մաքուր:*
[3] *Անհետ — անվերադարձ, առանց հետք թողնելու:*

ԻՄԱՍՏՈՒՆ ՄԱՐԴԸ

Վարդան Այգեկցի

Մի իմաստուն մարդ պատերազմի էր գնում: Նա երկու ոտքից կաղում էր: Մի զինվոր նրան ասաց.

– Ո՛վ ողորմելի, ո՞ւր ես գնում: Քեզ իսկույն կսպանեն, չէ՞ որ փախչել չես կարող:

Իսկ նա պատասխանեց.

– Ո՛վ անմիտ, ես չեմ գնում պատերազմի՝ փախչելու համար, այլ կանգնելու, կռվելու ու հաղթելու համար:

Հարցեր

1. *Ի՞նչ ասաց զինվորը պատերազմ գնացող մարդուն:*
2. *Ի՞նչ պատասխանեց իմաստուն մարդը:*
3. *Քո կարծիքով՝ ով էր նրանցից իրավացի:*

փախչել, հաղթել

Զինվորի մասին ասել են.

- *Թույլերը զինակից չեն ունենում:*
- *Զինվորի թիկունքին հայրենիքի սերն է:*

2 **Վանկախաղ**

Բառերի վանկերը խառնվել են: Վերականգնի՛ր բառերը:

1 *Գտի՛ր, թե ինչ սխալներ կան նկարում: Ո՞րն է ճիշտը:*

փախ ռազմ

թել

չել

պա

հաղ

տե

ԶԻՆՎՈՐԻԿԻ ԵՐԳԸ

Զինվոր եմ ես,
Քայլում եմ, տե՛ս,
Զենքեր ունեմ,
Զենքեր պես-պես:

Է՛լ գնդացիր՝
Զեզ լավ ծանոթ,
Է՛լ ինքնաթիռ,
Է՛լ թնդանոթ:

Տանկ էլ ունեմ
Իմ գրպանում.
Ափսոս, կարգին
Ձայն չի հանում:

Վաս

Ես եմ նրան
Կռվի տանում,
Նրա տեղը
Ձայներ հանում:

Ես վատի դեմ
Կանգնել գիտեմ,
Կռվել գիտեմ,
Հաղթե՛լ գիտեմ:

Ես պստիկ եմ,
Բայց ճստիկ եմ,
Հայրենիքի
Զինվորիկ եմ:

Հարցեր

1. Բանաստեղծությունից արտագրի՛ր միավանկ բառերը:
2. Ի՞նչ զենքեր ունեն զինվորները:
3. Ինչ՞ի համար է զինվորին պետք զենքը:

			ա	յ		
Ա	ր		ր	ա	տ	
մ	ա		ր	ե	ն	ի
Ս	և		ն			
	ու		ու	մ		
			ու	ն		
	հ		վ	ա	տ	
բ	ա		ա	կ		

1 *Ճիշտ լրացրո՛ւ բաց թողնված տառերը: Բառերը գրի՛ր տետրում: Կարմիր սյունակում կկարդաս քո ամենասիրելի բառերից մեկը:*

Առած

Պստիկ է, բայց ճստիկ է:

2 *Հետևյալ բառերով կազմի՛ր բառակապակցություններ և գրի՛ր.*

ճստիկ, հայրենիք, ծանոթ, սուրբ, գնդացիր, զինվոր:

Դարձվածք ՓՈՒՇԸ ՄԱՏԻՑ ՀԱՆԵԼ

Նշանակում է մեկին օգնել:

Սիրելի՛ փոքրիկ բարեկամ, այս հուշարձանին նայելիս մենք հիշում ենք մեր անմեղ զոհերին:

Հիշում ենք, որ Հայրենիքը պաշտպանելու համար պետք է ունենալ հզոր բանակ:

Իսկ հզոր բանակ ունենալու համար պետք են խելացի, համարձակ ու հայրենասեր զինվորներ:

Հիշի՛ր: Ժամանակակից հզոր զենքերով հայրենիքը պաշտպանելու համար պետք է առաջին հերթին լավ սովորել:

Հարցեր

1. Ինչո՞ւ պետք է լավ սովորել:

2. Ինչպե՞ս պետք է պաշտպանել հայրենիքը:

համարյակ

Ասա՛ մեկ բառով

Բարև տալ, նվեր տալ, հաշիվ անել, բաց անել, միտք անել, պարգև տալ:

Օրինակ՝ միտք անել – մտածել:

Սովորի՛ր երկու իմաստուն միտք

«Այբբենարանում» դու տեսել ես Սպարապետ Դրոյի, Զորավար Անդրանիկի և Գարեգին Նժդեհի նկարները:

Հայերս շա՜տ հերոսներ, մեծ զորավարներ ու զինվորներ ենք ունեցել:

Հիշենք Գարեգին Նժդեհին և նրա իմաստուն խոսքերից երկուսը.

Մեր ցավերը մոռանալու մի միջոց կա՝ մտածել ուրիշների ցավերի մասին:

Ո՞ւմ ես փրկվել. եղի՛ր ուժեղ:

ՆԿԱՐ ԱՍՖԱԼՏԻՆ

Երվանդ Պետրոսյան

Ես ասֆալտին այսօր
Մի տանկ նկարեցի:
Հայրս ասաց.– Ջնջի՛ր,
Ու նկարի՛ր դու ձի:

Տանկից,– հայրս ասաց,–
Կռվի հոտ է փչում,
Տանկից երգը, ախր,
Միշտ հեռու է փախչում:

– Չի՛ էլ կնկարեմ,
Երգը թող չփախչի...
Բայց,– ասացի,– հայրիկ,
Տանկը ես չեմ ջնջի:

Որ թշնամին տեսնի
Ու մոտ չգա էլ մեզ...
Հայրս ժպտաց, ասաց.
– Գուցե ճիշտը դո՛ւ ես:

Հարցեր

1. Ինչո՞ւ հայրը չէր ցանկանում, որ տղան տանկ նկարի:

2. Ինչպե՞ս տղան համոզեց հորը:

ասֆալտ

1 **Կարդա՛ և հիշի՛ր**

Բառերը լինում են միավանկ՝ աչք (1), և բազմավանկ՝ ատամ (2), ճաշարան (3), դպրոցական (4), պարծենկոտություն (5), և այլն:

2 **Կարդա՛ և սովորի՛ր**

Մեր երկրի անունը Հայաստան է: Հայաստանի մայրաքաղաքը Երևանն է:

Երկրների և քաղաքների անունները գրվում են մեծատառով:

3 *Վանդակներում գրի՛ր Հայ բառը: Կարդա՛ ստացված բառերը և գրի՛ր տետրում:*

□□□ — աստան, երեն, ուհի, աշատ, ասեր

4 *Պատմի՛ր, թե ինչ ես տեսնում նկարում:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐԵՐԸ

Էդվարդ Միլիտոնյան

Գունավոր է ու սիրուն
Հայաստանում ամեն քար:
Հովիվն էլ է զարմանում.
Ո՞րն է ծաղիկ, ո՞րը՝ քար:
Չի տարբերում նա անգամ՝
Ո՞րն է քարը, ո՞րը՝ գառ:
Պատահել է՝ գառան տեղ
Գյուղ է քշել մի մեծ քար:
Գունավոր է ու խելառ
Հայաստանում ամեն քար:

Հարց

Ինչ ես կարծում՝ Հովիվն իրո՞ք շփոթում էր գառն ու քարը:

4 Շարունակի՛ր

Ինչն է կլոր՝ գնդակը, արևը, ...:
Ինչն է ծանր՝ քարը, փիղը, ...:

1 *Ասա՛ մեկ բառով:*

Ոչխարներ արածեցնող մարդ:
Հիվանդներ բուժող մարդ:
Շենքեր կառուցող մարդ:
Հաց թխող մարդ:
Սովորեցնող մարդ:

5 *Առանձնացրո՛ւ երկու խմբով.*

ոչխար, ծաղիկ, կով, քար, ծիտիկ, հավ, ծառ, փայտ:

2 *Ո՞ր բառերն են «ընկերներ».*

գարուն, դահուկ, ամառ, անձրև, աշուն, շոգ, ձմեռ, ձնծաղիկ:

Օրինակ՝ գարուն – ձնծաղիկ:

6 *Ինչպիսի՞ն է քարը, ինչպիսի՞ն՝ ծաղիկը.*

քնքուշ, ամուր, ծանր, անուշահոտ, հսկայական, դալար, կարծր, ճկուն:

3 *Արտագրի՛ր՝ լրացնելով բաց թողնված բառերը:*

Մանուկները .... դպրոց:
Ծաղիկները .... գարնանը:
Երեխաները .... դրսում:
Կատուն .... մկան հետևից:

7 Շարունակի՛ր

արտ – արտեր
այգի – ....
հետք – ....
գազան – ....
քար – ....
կատու – ....

ԿԱՐԴԱ՛

Ալեքսանդր Ծատուրյան

Կարդա՛, ա՛յ իմ խելոք մանուկ,
Կարդա՛, գրի՛ր տարին բոլոր[1],
Կարդացողի խելքն է կտրուկ[2],
Միտքը՝ պայծառ ու լուսավոր:

Գիրք կարդալով՝ դու գրքերում
Շատ նորանոր բան կիմանաս,
Շատ շատերից շատ բաներում
Մտքով հեռու կսլանաս:

Կարդա՛, ա՛յ իմ խելոք մանուկ,
Կարդա՛, գրի՛ր տարին բոլոր,
Կարդացողի խելքն է կտրուկ,
Միտքը՝ պայծառ ու լուսավոր:

Հարցեր

1. Մանուկներն ինչո՞ւ պետք է գրքեր կարդան:

2. Դու արդեն կարողանո՞ւմ ես հեքիաթներ կարդալ, թե՞ մեծերն են քեզ համար կարդում:

առգև, հեքիաթ

1 *Լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝ է կամ ե.*

□ջմիածին, □ռեխա, ս□ղան, □լակ, □մին:

2 *Ի՞նչ ես կարծում՝ ո՞ւր կարելի է սլանալ մտքով:*

3 *Պատկերացրո՛ւ, որ հանդիպել ես մի մարդու, որը չգիտի, թե ինչ է գիրքը: Բացատրի՛ր նրան:*

4 ### Տառհանելուկ

Թե՛ բառի մեջ, թե՛ վերջում
Ես հնչում եմ՝ է՜, է՜, է՜,
Երբ գնում եմ առջևից,
Ես երգում եմ՝ յէ՜, յէ՜, յէ՜...

[1] *Տարին բոլոր — ամբողջ տարին:*
[2] *Կտրուկ խելք ունեցող — շուտ հասկացող, սուր միտք ունեցող:*

ՀԱՅԸ

Վաս

Սիսին նստած մի Հ տառ,
Իսկ Մասիսին՝ մի Յ տառ՝
Խորհում[1] էին անդադար՝
Ինչպես դառնան մի լավ բառ:
Բայց ինչպես էլ կանգնեցին,
Բառ չստացվեց, տխրեցին:

– Ա՜,– ծոր տվեց Հ տառը,–
Իջնենք մոտիկ անտառը,
Թող խորհուրդ տա Ա տառը:
Յ-ն աջ կողմից մոտեցավ,
Հ-ն ձախ կողմից մոտեցավ,
Ու երբ հասան Ա տառին,
ՀԱՅ-ը ծնվեց այդ պահին:

Հարցեր

1. *Որտե՞ղ էին նստած Հ և Յ տառերը և ի՞նչ էին մտածում:*
2. *Նրանք ինչպե՞ս բառ կազմեցին:*
3. *Բանաստեղծությունը բեմականացրե՛ք:*

Հայի և հայերենի մասին ասել են.

❀ *Հայոց տառերն ապրում են Աստծու սրտում:*

❀ *Հայոց լեզուն հայի զենքն է. նա է հային հայ պահում:*

❀ *Հայ ժողովուրդ նշանակում է հայոց լեզու, իսկ հայոց լեզու՝ հայ ժողովուրդ:*

1 **Շուտասելուկ**

Մեծ Մասիսը փոքր չէ Փոքր Մասիսից, Փոքր Մասիսը փոքր է Մեծ Մասիսից:

2 *Պատմի՛ր՝ ինչ ես տեսնում նկարում:*

3 **Կարդա՛ և սովորի՛ր**

Գիտե՞ս, թե ինչու Հ-ն ու Յ-ն չկարողացան երկուսով բառ կազմել: Չէ՞ որ երկու տառանի բառեր շատ կան: Օրինակ՝ ես, դու, նա, իմ, քո, ձի և այլն:

Հիշի՛ր. առանց ձայնավորի ոչ մի բառ չի կարող լինել:

[1] *Խորհել — մտածել:*

ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Պատմի՛ր՝ ինչ ես տեսնում նկարում:

ԿԱՏԱԿ

Վաս

Մի օր շունը պարծեցավ.

– Բոլորը գիտեն, թե ինչ համով բան է ստացվում, երբ իմ անունը հակառակ ենք կարդում՝ շուն–նուշ:

– Ես էլ բույս եմ դառնում,– խռխռաց խոզը՝ խոզ–զոխ:

– Մի կում ջուր եմ դառնում, երբ կատու եմ տեսնում,– ճստճստաց մուկը՝ մուկ–կում:

– Վա՜հ, զարմացրիք,– կչկչաց հավը: – Բա ե՞ս ինչ ասեմ՝ հավ–վահ:

– Ի՞նչ եք զուր տեղը հպարտանում,– ասաց ջրարջը: – Ինձ նման անուն կունենան. որ կողմից էլ կարդաս, նույնն է՝ ջրարջ:

Կենդանիների վեճը լսում էին Աննան, Նազանը և Տաճատը: Նրանք ժպտում էին: Ինչո՞ւ:

Հարցեր

1. Ինչո՞ւ էին կենդանիները վիճում:

2. Կարո՞ղ ես հիշել այնպիսի բառեր, որոնք աջից և ձախից կարդալիս նույնն են:

2 **Շարունակի՛ր**

նկար – նկարել
կանչ – ....
պար – ....
խաղ – ....

1 *Գտի՛ր, թե ինչ սխալներ կան նկարում: Ո՞րն է ճիշտը:*

ԼՈՒՍԻԿԻ ԿԱՏՈՒՆ

Ռուբեն Ղարիբյան

– Բժի՜շկ, բժի՜շկ, ե՛կ մեր տուն,
Շատ հիվանդ է մեր կատուն,
Մի ճա՛ր արա՝ լավանա,
Թե չէ ձեռքից կգնա...

Մեր Վաչիկը, ահագին
Ճերմակ խալաթը հագին,
Լուսիկի հետ մտավ տուն,
Ուր պառկած էր մեր կատուն...

Նայեց սուր-սուր ճանկերը,
Շոյեց կեռ-կեռ հոնքերը,
Ցոցատետրը դուրս բերեց,
Գրիչն առավ ու գրեց.

«Ոչի՜նչ, ոչի՜նչ, ձեր կատուն
Չունի այնքան տաքություն,
Մի ձուկ, մի մուկ որ ուտի,
Շուտ կկանգնի նա ոտի»...



Հարցեր

1. Ինչո՞ւ բժիշկ կանչեց Լուսիկը:
2. Նկարագրի՛ր, թե ինչ արեց բժիշկը:
3. Ի՞նչ դեղատոմս գրեց բժիշկը:
4. Դու սիրո՞ւմ ես տանը որևէ կենդանի պահել: Պատմի՛ր այդ մասին:
5. Պատկերացրո՛ւ, թե դու բժիշկ ես: Կարո՞ղ ես կատվի համար մեկ այլ դեղատոմս գրել:

1

Փոխակերպում

Կատվի ցավի համար բժիշկը դեղ գտավ: Այժմ մենք, մի-մի տառ փոխելով, ցավ-ից ստանանք դեղ.

ցավ – հավ – հով – հո□ – դող – դեղ:

2

Նկարագրիր՝ ինչպիսին է կատուն:

Օրինակ՝ մաքրասեր է, ...:



3 Սղոցը առարկա է:
Սղոցելը այդ առարկայով կատարվող գործողությունն է:

Առած

Մկան համար կատվից ուժեղ գազան չկա:

ԱՐՋԱՄԿԱՆ ԱՊՈՒՐԸ

Վաս

Ամպն անձրևեց: Արևն արթնացավ, ասաց.

– Արթնացե՛ք, անտառնե՛ր, արթնացե՛ք, արտեր:

Անտառում, առվի ափին, արտում արթնացան արջը, արջամուկը, աղվեսը:

Արջն ասաց.

– Աղվե՛ս, արի այցելենք արջամկանը, ապուր անուշ անենք:

– Այցելե՛նք, արջ ախպեր,– ասաց աղվեսը:

Արջը, աղվեսը այցելեցին արջամկանը, անուշ արեցին ապուրը, արջամկանն ասացին՝ ապրես:

Ուշադրություն դարձրի՞ր, որ պատմվածքի բոլոր բառերն սկսվում են նույն տառով:

Հարցեր

1. *Արջն ի՞նչ առաջարկեց աղվեսին:*
2. *Աղվեսն ինչո՞ւ ընդունեց արջի առաջարկը:*
3. *Մտածի՛ր ուրիշ շարունակություն:*

1 *Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:*

2 **Հանելուկ**

Պոչն է երկար, փափկամազիկ,
Հավ է սիրում, հեզիկ-նազիկ,
Փորձառու է, շատ խորամանկ,
Բայց ինքն էլ է ընկնում թակարդ:

3 **Կատակ**

– Ինչո՞ւ է արջը հում միս ուտում:
– Որովհետև եփել չգիտի:

Առած

փորձված աղվեսը երկու ոտքով է ընկնում թակարդ:

ՓԻՍԻԿՆԵՐԻ ԳՆԴԱԿԸ

Ռուբեն Դարիբյան

Մի մեծ ծառի ստվերում մի գնդակ էր ընկած:

Փիսիկները վազելով մոտեցան գընդակին:

– Ի՜նչ կլորիկ, ի՜նչ սիրուն գնդակ է:

– Եկեք գնդակ խաղանք,– ասացին փիսիկներն իրար:

Նրանք շրջան կազմեցին, մեկիկ-մեկիկ մոտեցան գնդակին: Սակայն նրանց թաթիկներն ու դնչիկները ծակծկվեցին ու արյունոտվեցին:

Փիսիկները տուն վազեցին ու ամեն ինչ պատմեցին մայր կատվին:

Նա գործերը թողեց ու վազեց ծառի մոտ: Տեսավ, որ «գնդակը» ոզնու մի ծագուկ էր:

Հարցեր

1. Փիսիկներն ինչո՞ւ գլխի չընկան, որ ոզնու ձագուկը գնդակ չէ:

2. Ի՞նչ ես կարծում, մայրիկը նրանց ինչպես բացատրեց դա:

3. Ինչո՞ւ էր ոզնու ձագուկը գունդուկծիկ դարձել:

1

Վանկախաղ

Ասա այնպիսի՛ բառեր, որոնք սկսվում են հետևյալ բառերի վերջին վանկերով.

հատիկ, հետո, փիսո, այսպիսի, միայն:

Օրինակ՝ հետո – տոնել, տոնական, տոնավաճառ:

2 *Գտի՛ր, թե ինչ սխալներ կան նկարում: Ո՞րն է ճիշտը:*

ԲԿԼԻԿ ՁԿՆԻԿ

Խնկո Ապեր

– Ձկնի՛կ, լո՛ղ տուր, լո՛ղ արա,
Դրսի որսը թո՛ղ արա,
Իջի՛ր ջրի հատակը,
Մինչև անցնի վտանգը:
Տե՛ս, փորձանք կա քո գլխին,
Մի լա՛վ մտիկ երեխին.
Որդ է խփել իր կարթին,
Ձմոտենա՛ս այդ որդին...
Ինձ չլսեց շեկլիկը,
Ինձ չլսեց բկլիկը,
Հո՛պ, կուլ տվեց նա որդը,
Կարթը մնաց կոկորդը:

որդ, իջնել

Հարցեր

1. Ի՞նչ վտանգի մասին են զգուշացնում ձկնիկին:

2. Ինչպե՞ս ձկնիկը կարթն ընկավ:

3. Ասա՛, թե որտեղ են ապրում ձկները:

4. Կցանկանայի՞ր ձկնորսության գնալ: Ի՞նչ գիտես այդ մասին:

1 *«Բկլիկ ձկնիկ» բանաստեղծությունից արտագրի՛ր այն բառերը, որոնց մեջ երեք բաղաձայն կողք կողքի են: Վանկերի բաժանի՛ր այդ բառերը:*



2 *Օգնի՛ր, որ ձագուկները հասնեն իրենց մայրիկներին: Օգնելու համար տեսրում գրի՛ր, թե որը որի ձագուկն է:*

3 Պատասխանի՛ր հարցերին
Ո՞վ է ձուկ որսում:
Ի՞նչ կա երեխայի ձեռքին:

4 *Ամբողջացրո՛ւ նախադասությունը (ո՞վ, ի՞նչ).*

.... է ապրում այս տանը:
.... է ուտում կովը:
.... է կարդում այս գիրքը:
.... է ջարդել Անին:

5 **Կարդա՛ և սովորի՛ր**

Բկլիկ ձուկ, կարմիր խնձոր բառակապակցությունների մեջ բկլիկ և կարմիր բառերը ցույց են տալիս, թե ինչպիսին են, ինչ հատկանիշ ունեն ձուկը և խնձորը:

ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

Պատմի՛ր՝ ինչ ես տեսնում նկարում:

ԱՂՎԵՍՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Վարդան Այգեկցի

Աղվեսը մի գրոտած թուղթ գտավ, տարավ գայլին ու ասաց.

– Շա՜տ չարչարվեցի, մինչև իշխանն այս թուղթը տվեց: Ո՛ր գյուղը կուզես, մտի՛ր, այս թուղթը ցո՛ւյց տուր, քեզ մի ոչխար կտան:

Աղվեսն այդպես խաբեց գայլին: Նրանք միասին հասան մի գյուղի: Աղվեսը թուղթը տվեց գայլին, ինքը նըստեց բլրի վրա: Գայլը, թուղթը ձեռքին, մտավ գյուղ: Իսկ գյուղում շներն ու մարդիկ վրա հասան, գզեցին ու ծեծեցին նրան: Մի կերպ գլուխն ազատելով՝ գայլը փախավ, հասավ աղվեսին: Աղվեսը հարցրեց.

– Ինչո՞ւ թուղթը ցույց չտվեցիր:

Գայլը պատասխանեց.

– Ցույց տվեցի, բայց գյուղի շները կարդալ չգիտեին:

թուղթ

Հարցեր

1. *Աղվեսն ինչպե՞ս խաբեց գայլին:*
2. *Ինչո՞ւ աղվեսը գայլի հետ չմտավ գյուղ:*
3. *Գայլը հասկացա՞վ, որ աղվեսն իրեն խաբել է:*
4. *Ի՞նչ ես կարծում՝ թղթի վրա ի՞նչ էր գրված:*

1 Մի նամակ գրի՛ր գայլին:

Պատմի՛ր, որ աղվեսն ուզում է խաբել իրեն:

2 Շարունակի՛ր

Ինքնաթիռը հոնդում է: Հեռախոսը ....: Գայլը ....: Ծիտիկը ....: Ագռավը ....: Հավը ....: Գորտը ....:

3 Ո՞րն է սխալը

Այս առակի մեջ գայլը խորամանկ էր, իսկ աղվեսը՝ միամիտ:

4 *Այս բառերով և տառերով հորինի՛ր մի խաղ: Նկարագրի՛ր խաղը, անվանի՛ր և լուծի՛ր:*

Բարձ, չոր, բարդ, անալի, աղալ, ութ:

5 *Հետևյալ բառերով կազմի՛ր երեք բառակապակցություն.*

համեղ, ամպ, զինվոր, բարձր, հաց, քաջ:

ԹԵ ԻՆՉՈՒ ԿԱՏՈՒՆ ՃԱՇԻՑ ՀԵՏՈ Է ԼՎԱՑՎՈՒՄ

Մի ճնճղուկ արտում հատիկներ էր կտցում: Արտում թաքնված կատուն ճարպկորեն ցատկում ու բռնում է նրան:

Ճնճղուկն ասում է կատվին.

– Պարո՛ն կատու: Չէ՞ որ դուք դաստիարակված եք: Ո՞վ է տեսել, որ այսպիսի մի պարոն ճաշի նստի առանց լվացվելու:

Կատուն ամաչում է: Ճնճղուկին դնում է գետնին ու թաթերով լվացվում է:

Իսկ ճնճղուկը թռչում-փախչում է:

Կատուն զայրանում է ու որոշում, որ դրանից հետո կլվացվի միայն ճաշելուց հետո:

Հարցեր

1. Ճնճղուկը ինչպե՞ս խաբեց կատվին:

2. Ինչո՞ւ կատուն որոշեց լվացվել ուտելուց հետո:

3. Դու օրվա մեջ ե՞րբ ես լվանում ձեռքերդ: Պատմի՛ր:

2 Հանելուկ

Կենդանի է նա մաքրասեր,
Շատ է սիրում մածուն ու սեր,
Լվացվում է շատ խնամքով,
Սակայն՝ միայն ճաշից հետո:

1 Շուտասելուկ

Որ չդառնա չրի ծառ,
Չրի՛ր ծառը, ա՛յ Պայծառ:

Դարձվածք ԱՉՔԸ ՎՐԱՆ ՄՆԱԼ



Ասում ենք այն ժամանակ, երբ մի բան շատ ենք հավանում, մի բանի կարոտ ենք մնում կամ կորցնում ենք դա:

ՄՈՒԿՆ ԸՆԿԵՐԱՆՈՒՄ Է ՄԿԱՆ ՀԵՏ

Մուկն ուզում էր ուժեղ ընկեր ունենալ, բայց չգիտեր, թե ով է ուժեղը: Դիմում է արևին: Արևն ասում է.

– Ամպն է ուժեղ: Ամպն ինձ ծածկում է:

Ամպին է դիմում: Ամպն ասում է.

– Քամին է ուժեղ: Քամին ինձ քշում է:

Քամուն է դիմում: Քամին ասում է.

– Քարն է ուժեղ: Քամին քարին բան չի անի:

Քարին է դիմում: Քարն ասում է.

– Մարդն է ուժեղ: Մարդն ինձ ճեղքում է:

Մարդուն է դիմում: Մարդն ասում է.

– Ցորենն է ուժեղ: Առանց ցորենի ես կմեռնեմ:

Ցորենին է դիմում: Ցորենն ասում է.

– Մուկն է ուժեղ: Մուկն ինձ ուտում է:

– Որ այդպես է, ուրեմն ուժեղը մուկն է. ես էլ մկան հետ կընկերանամ,– ինքն իրեն ասում է մուկը:

Հարցեր

1. *Մուկն ինչպե՞ս գտավ ամենաուժեղին:*
2. *Քո կարծիքով՝ ով է ամենաուժեղը: Հիմնավորի՛ր:*

2 Հանելուկ

Հողե ծուռտիկ խողովակ,
Նրա միջով շատ արագ
Սլանում է մի գնդակ:

3 *Ի՞նչ են անում մկները: Պատասխանը գրի՛ր տետրում:*

1 Գտե՛ք «հակառակորդներին»:



Առած

Մուկը ինքը պստիկ է, երակները մեծ-մեծ են:

ԹԵ ԻՆՉՈՒ Է ՆԱՊԱՍՏԱԿԻ ՇՐԹՈՒՆՔԸ ՃԱՔԱԾ

Նապաստակների ժողովին մի նապաստակ ասում է.

– Մենք ամենավախկոտն ենք:

Մյուսն ավելացնում է.

– Մեզ բոլորը նեղացնում են:

Երրորդն ասում է.

– Ավելի լավ է գնանք թափվենք գետը, խեղդվենք:

Որոշում են այդպես էլ անել: Ամբողջ խմբով մոտենում են գետին: Գետի ափին արածում էին ոչխարները: Տեսնելով այդքան շատ նապաստակ, նրանք վախից փախչում են:

Նապաստակները տեսնում են, որ իրենցից էլ վախեցողներ կան: Ուրախանում են: Այնքան են ծիծաղում, որ շրթունքները ճաքում են ու այդպես էլ մնում մինչև օրս:

Հարցեր

1. Ինչո՞ւ են նապաստակները որոշում գետը թափվել, խեղդվել:

2. Ինչո՞ւ նրանք դա չեն անում:

3. Քո կարծիքով՝ ո՞ր կենդանին է ամենավախկոտը, իսկ ամենաանվա՞խը:

1 Շուտասելուկ

Արի, Սուսան, շարիր սարի շուշան:

2 Պատկերացրո՛ւ, որ հանդիպել ես մի մարդու, որը չգիտի, թե ինչ է նապաստակը: Այնպե՛ս նկարագրիր ու բացատրիր, որ հասկանա:

ամ՞բողջ, երրորդ

3 Ի՞նչն է, որ՝

բրդոտ է, ունի չորս ոտք,
կաթ է տալիս, խոտ է ուտում:

Դարձված ՍԻՐՏԸ ՓՈՐՆ ԸՆԿՆԵԼ



Ասվում է այն ժամանակ, երբ սաստիկ վախենում են:

ՎԱԳՐՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Քաղցած վագրը կերակուր էր փնտրում: Բախտի բերմամբ մի աղվես բռնեց:

– Դու ինձ չես կարող ուտել,– ասաց աղվեսը:

– Ինչո՞ւ,– զարմացավ վագրը:

– Մի՞թե չգիտես,– հարցրեց աղվեսը:

– Ո՛չ:

– Որ այդպես է, արի՛ գնանք, և դու կտեսնես, թե ինչպես են բոլոր գազանները սարսափած փախչում ինձնից,– ասաց աղվեսը:

Եվ նրանք միասին գնացին:

Իսկապես, բոլոր գազանները փախչում էին:

Վագրը չհասկացավ, որ գազաններն իրենից էին վախենում: Նա կարծում էր, թե բոլորն աղվեսից են փախչում: Ու... բաց թողեց աղվեսին:

Հարցեր

1. Կենդանիներից ո՞րն էր խորամանկ:

2. Աղվեսն ինչպե՞ս խաբեց վագրին:

3. Կցանկանայիր աղվեսի՞ պես ընկեր ունենալ, թե՞ վագրի:

4. Մեկական բառով բնութագրի՛ր աղվեսին, վագրին:

1 *Թվի՛ր մի քանի վայրի կենդանի:*
Օրինակ՝ գայլ, ...:

Հայկ

Սոնա

Գևորգ

2 *Տետրում գրի՛ր, թե ինչ են անում Հայկը, Սոնան ու Գևորգը:*

3 *Կարդա՛ առածը*



4 *Հանելուկ*

Մորթի ունի շերտավոր,
Մեծ կատու է ահավոր,
Միայնակ է որս անում,
Երկինք-գետին սասանում:

ԽԵԼԱՑԻ ԾԻՏԸ

Մի ծիտիկ ծառի ճյուղին նստած ծլվլում էր:

– Բարի՛ լույս,– նրան ասում է կատուն:

– Բարի՛ լույս,– պատասխանում է ծիտիկը:

– Բարի լուր ունեմ քեզ հայտնելու,– ասում է կատուն: – Այսօրվանից բոլոր կենդանիները բարեկամներ են: Իջի՛ր զրուցենք:

– Շա՜տ լավ է,– ասում է ծիտիկը: – Ահա ծառի վրայից ես տեսնում եմ, որ այստեղ են շտապում մեր մյուս բարեկամները՝ շները:

– Շնե՞րը,– վախենում է կատուն և ուզում է փախչել:

– Ինչո՞ւ ես վախենում, չէ՞ որ շներն էլ գիտեն, որ բոլոր կենդանիները բարեկամներ են,– կատվին ծաղրում է խելացի ծիտիկը:

Հարցեր

1. Ի՞նչ էր ասում կատուն ծիտիկին:

2. Ծիտիկն ինչպե՞ս ստուգեց կատվի ասածը:

3. Կատուն ինչո՞ւ էր ուզում խաբել ծիտիկին:

1 **Շուտասելուկ**

Առանց թամբի ու սանձի՝
Այցի գնաց այծին ձին:

2 Կազմի՛ր նախադասություններ՝ օգտագործելով *կատու*, *ծիտ*, *շուն*, *կենդանի* բառերը:

3 **Հիշո՞ւմ ես**

Նախադասությունը սկսում ենք մեծատառով:

Վերջում դնում ենք վերջակետ:

Դարձվածք ՊՈՉՈՎ ՍՈՒՏ ԱՍԵԼ

Ասվում է այն ժամանակ, երբ մեկը խիստ անհավանական ստեր է ասում, անիրական դեպքեր հորինում:

Առած

Ապի ոտքերը կարճ են:

ՔԱՋ ՆԱԶԱՐ

– Էս ինչքա՜ն ուժեղ եմ:

Անհաղթ հերոս Քաջ Նազար,
Մեկ զարկում է, ջարդում՝ հազար:

– Վա՛յ, վա՛յ,– վախից գոռում է Նազարը:
– Իա՛, իա՛,– զոռում է էշը:

– Վա՛յ, ավազակներ են,– վախենում են մարդիկ:

Բոլորը սկսում են վախենալ Նազարից, խմում են նրա կենացը:

Նազարը ծառի վրայից վախից ուշաթափված ընկնում է վագրի վրա: Բոլորը ուրախանում են, որ Նազարը վագրին ձի է արել:

Նազարը բռնում է ծառից, որ չընկնի: Ծառը փտած է լինում: Բոլորը սարսափում են նրանից:



Նազարը դառնում է թագավոր:

ԶՎԱՐՃԱԼԻՔ

Սուտասելուկ

Վաս

Ես ունեմ մի հայելի,
Արմանք-զարմանք նայելի,
Երբ նայում եմ ես նրան,
Գլխիվայր է ամեն բան.
Պիտի կանգնեմ գլխի վրա,
Որ ամեն բան իր տեղը գա:

Հաշվելուկ

Հրանտ Վարդանյան

Մեկ, երկու, երեք,
Լուսերեսին ներս բերեք:
Չորս, հինգ, վեց,
Լուսերեսը հայտնվեց:
Յոթ, ութ,
Ձեռքին ունի մի սև թութ.
Սևացել են քիթ-մռութ:
Ինը, տասը,
Բերեք թասը,
Քիթ-մռութը լվանանք,
Լույս երեսով հիանանք:

1

Մտածելուկ

Շարունակի՛ր տառաշարը.
ա, գ, ե, է, ...:

2

Գլուխկոտրուկ

Ո՞ր բառերի առաջին տառերն են գրված: Շարունակի՛ր:
Մ, ե, ե, չ, հ, վ, յ, ու, ի, տ, տ, տ, ...:

4

Շուտասելուկ

Մի փուչիկ փչի՛ր. թռչում է, թող թռչի, չի թռչում, թող չթռչի:

Խնդուկ

– Լիլի՛թ, ռետինը մի՛ դիր բերանդ. լեզուդ կջնջի:

5

Նկարելուկ

Գտի՛ր՝ ինչ նախադասություն է «գրված» այստեղ:

ը

ից

ի


է:

3

Հանելուկ

Ինձ առանձին չեն ուտում,
Եվ առանց ինձ չեն ուտում:

ՈՒԼԻԿԸ

Հովհաննես Թումանյան

Խոր անտառում մի այծ է լինում: Ունենում է մի գեղեցիկ ուլիկ: Ուլիկին ամեն օր թողնում է տանը, ինքը գնում է արոտ անելու: Արածում է ու իրիկունը, կուրծքը լիքը, տուն է գալիս:

Տուն է գալիս, դուռը զարկում ու մկկում, կանչում.

– Սևո՜ւկ ուլիկ,
Սիրո՜ւն բալիկ,
Ման եմ եկել սարեսար,
Կաթ եմ բերել քեզ համար,
Դռնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ կաթ տամ քեզ,
Սևո՜ւկ ուլիկ, սիրո՜ւն բալիկ:

Ուլիկն իսկույն վեր է թռչում, դուռը բացում: Մայրը կաթ է տալիս նրան ու կրկին գնում արոտի:

Էս բոլորը թաքուն տեսնում է գայլը: Մի իրիկուն այծից առաջ գալիս է, դուռը թակում ու իր հաստ ձայնով կանչում.

– Սևո՜ւկ ուլիկ,
Սիրո՜ւն բալիկ,
Ման եմ եկել սարեսար,
Կաթ եմ բերել քեզ համար,
Դռնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ կաթ տամ քեզ,
Սևո՜ւկ ուլիկ, սիրո՜ւն բալիկ:

59

Մկկալ, սևռակ

Հարցեր

1. Ուլիկն ինչի՞ց է իմանում, որ դուռը թակողն իր մայրիկն է:

2. Գայլն ի՞նչ խորամանկության է դիմում ուլիկին խաբելու համար:

2 Հետաքրքրաշարժ բաղաձայններ

Գ, Կ, Ք — ՈՂ

Գ, Կ, Ք — ԵՐԵԼ է

1 *Ի՞նչ է անում խոզուկը:*
Ի՞նչ է անում այծը:
Պատասխանները գրի՛ր տետրում:



3 Տառհանելուկ

Ուղտի սկզբում է
Ու կատվի՝ վերջում:
Ուլիկը ռնի,
Իսկ այծը չռնի:

Ուլիկը լսում է, լսում ու պատասխանում.

– Ո՞վ ես դու, քեզ չեմ ճանաչում: Իմ մայրն էդպես չի կանչում: Նա քաղցր ու բարակ ձայն ունի: Քո ձայնը կոշտ է ու կոպիտ: Դուռը բաց չե՛մ անի... Գնա՛... Չեմ ուզում քեզ...

Ու գայլը հեռանում է: Գալիս է մայրը, դուռը ծեծում.

– Սևո՜ւկ ուլիկ,
Սիրո՜ւն բալիկ,
Ման եմ եկել սարեսար,
Կաթ եմ բերել քեզ համար,
Դռնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ կաթ տամ քեզ,
Սևո՜ւկ ուլիկ, սիրո՜ւն բալիկ:

Ուլիկը դուռը բացում է, կաթը ուտում ու մորը պատմում.

– Գիտե՞ս, մայրի՛կ, ինչ եղավ: Մի քիչ առաջ մեկը եկավ, դուռը ծեծում ու կանչում էր.

– Սևո՜ւկ ուլիկ,
Սիրո՜ւն բալիկ...

Ասում էր՝ դուռը բա՛ց արա: Էնպե՜ս հաստ ձայն ուներ: Էնպե՜ս վախեցա, էնպե՜ս վախեցա... Դուռը բաց չարի, ասի՝ չեմ ուզում, գնա՛...

– Պա՛, պա՛, պա՛, պա՛, Սևո՛ւկ ջան: Ի՜նչ լավ է եղել, որ չես բացել,– ասաց վախեցած մայրը: – Դա գայլն է եղել. եկել է, որ քեզ ուտի: Մյուս անգամ էլ որ գա, բաց չանես, ասա՝ գնա՛, թե չէ իմ մայրը քեզ կսպանի իր սուր պոզերով:

2 *Բառերը դասավորի՛ր այնպես, որ ստացվի նախադասություն.*

ուզում, գայլն, ուլիկին, ուտել, էր:

Հարցեր

1. Գայլի մասին ուլիկն ի՞նչ պատմեց մորը:

2. Ի՞նչ խորհուրդ տվեց մայրիկը:

3 *Գտի՛ր «ավելորդը».*

ոչխար, այծ, խոզ, գայլ:

1 *Ի՞նչ է անում գայլը:*
Ի՞նչ է անում ուլիկը:

Պատասխանները գրի՛ր տետրում:

4 *Հետաքրքրաշարժ բաղաձայններ*

ԴՈՒՐ – ՏՈՒՐ – ԹՈՒՐ
ԴԱՂ[1] – ՏԱՂ[1] – ԹԱՂ
ԴՈՂ – ՏՈՂ – ԹՈՂ

[1]*Դաղ — կակիծ, մրմուռ:*
[2]*Տաղ — երգ, բանաստեղծություն:*

ՈՎ ԱՇԽԱՏԻ, ՆԱ ԿՈՒՏԻ

Հեքիաթ

Մի խրճիթում ապրում էին մուկիկը, ծիտիկը և հավիկը: Մի օր քուջուջ անելիս հավիկը մի հատիկ գտավ ու կանչեց.

– Հատի՜կ եմ գտել, հատի՜կ եմ գտել: Ո՞վ կտանի աղալու:

– Ես՝ չէ՛,– ասաց մուկիկը:

– Ես էլ՝ չէ՛,– ասաց ծիտիկը:

Ի՞նչ աներ հավիկը: Հատիկը ջրաղաց տարավ, աղաց:

– Ալյուրն ո՞վ տուն կտանի,– հարցրեց հավիկը:

– Ես՝ չէ՛,– ասաց ծիտիկը:

– Ես էլ՝ չէ՛,– ասաց մուկիկը:

Հավիկն ալյուրը շալակեց, տուն տարավ:

– Ո՞վ խմոր կանի,– հարցրեց հավիկը:

– Ես՝ չէ՛,– ասաց մուկիկը:

– Ես էլ՝ չէ՛,– ասաց ծիտիկը:

61

Հարցեր

1. Կարո՞ղ ես նկարագրել, թե հավն ինչպես է քուջուջ անում:

2. Հավիկը ցորենից ինչպե՞ս ալյուր ստացավ:

1 Փոխակերպում

Տե՛ս, թե ինչպես, բառի մեջ մի-մի տառ փոխելով, շուն-ից ստանում ենք կով.

շուն – հուն – հոն – հով – կով:

Այժմ դու հավ-ից ստացի՛ր մուկ.

հավ – հով – հո□ – հուր – □ուր – մուկ:

2 Ցորենից՝ հաց

Ցորեն և ջրաղաց ⟶ ալյուր

Ալյուր և ջուր ⟶ խմոր

Խմոր և թոնիր ⟶ հաց

3 Շարունակի՛ր

Մեկ հատ	Շատ
մուկ	մկներ
կատու	....
հատիկ	....
ջրաղաց	....

4 Բառքամոցի

Աշխատասեր բառի տառերով կազմի՛ր նոր բառեր:

Հավիկը խմոր հունցեց:
– Թոնիրն ո՞վ կվառի,– հարցրեց հավիկը:
– Ես՝ չէ՛,– ասաց մուկիկը:
– Ես էլ՝ չէ՛,– ասաց ծիտիկը:
Հավիկը թոնիրը վառեց:
– Հացն ո՞վ կթխի,– հարցրեց հավիկը:
– Ես՝ չէ՛,– ասաց մուկիկը:
– Ես էլ՝ չէ՛,– ասաց ծիտիկը:
Հավիկը հացը թխեց, դրեց սեղանին:
– Հացն ո՞վ կուտի,– հարցրեց հավիկը:
– Ե՜ս,– գոչեց ծիտիկը և մոտեցավ սեղանին:
– Ե՜ս,– գոչեց մուկիկը և մոտեցավ սեղանին:
Հավիկը նրանց սեղանից հեռացրեց ու մենակ կերավ հացը:

1 **Սխա՞լ է, թե՞ ճիշտ**

Հեքիաթի մուկիկը ընկերասեր է:
Հեքիաթի ծիտիկը ծույլ է:
Հեքիաթի հավիկը աշխատասեր է:

2 *Աջ սյունակի բառերը դի՛ր ճիշտ տեղերում և ստացի՛ր նախադասություններ:*

ցորենը	վառում են
թոնիրը	թխում են
հացը	աղում են

Հարցեր

1. Ընտրի՛ր՝ ով է աշխատասերը. մուկիկը, ծիտիկը, հավիկը:
2. Ինչո՞ւ հավիկը սեղանից հեռացրեց մուկիկին ու ծիտիկին:
3. Ճի՞շտ վարվեց հավիկը:

3 *Ո՞ր բառը կդնես նախադասության մեջ* (ջրաղացի, թոնրի, ջրհորի, տան).

Հավիկը հացը թխեց .... մեջ:

☺ Խնդուկ

Թամարիկը խոսում է տիկնիկի հետ.
– Տիկնի՛կ ջան, արի՛, ճաշդ կե՛ր:
– Ճաշդ դո՛ւ կեր, իսկ ես գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:
– Տիկնի՛կ ջան, խելո՛ք մնա:
– Դո՛ւ խելոք մնա, իսկ ես գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

4 *Տետրում գրի՛ր, թե ինչ ես տեսնում նկարում:*

Առած

Ով աշխատի, նա կուտի:

ՈՐՈՇ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

էջ

4. 3. Դասագիրք: 4. Դա, դաս, սա, ասա, սագ, գիր, գիրք, իր, ագի:
5. 1. Դ տառը: 2. Ձ տառը:
6. 3. Գարուն (մնացածը 4-տառանի են):
7. 1. Ծառա, Շաքե: 2. Արա՛, արի՛: 4. Օրինակ՝ առյուծ, առավոտ, կատու, կապիկ, որդի, որսորդ, միջակ, միջուկ:
8. 1. Սագ, ճուտ, գետ, երեք: 3. Սագ (միակ ընտանի թռչունը, միավանկ բառը):
9. 3. Աշուն, սուրճ, գիրք, նստել: 4. Գայլ (միակ վայրի կենդանին):
10. 2. Օրինակ՝ ձյուն, բուք, մուշտակ, դահուկ, ցուրտ: 3. Օրինակ՝ ա, ու, ի (ձայնավոր) – տ, կ, ց, ն (բաղաձայն) կամ տ, ու, ն (կապույտ) – կ, ա, ց, ի (կարմիր): 5. Ամպ – երկինք, գետ – կամուրջ, այգի – միրգ:
13. 1. Հավ (միակ ընտանի թռչունը):
15. Ծառ – ճյուղ, որդի – մայր, դաշտ – խոտ, սիրտ – մղկտալ: 2. Ես խնամում եմ մեր բակի ծառերը: 3. Վարդ, լույսը, սար, աղ:
16. 2. Ամպեր: 3. Ծառ, պատ, ինը, նուշ, թոռը:
20. 4. Ո տառը: 5. Քնքուշ – մայրիկ, ուժեղ – հայրիկ, գույնզգույն – ծիածան:
23. 1. Լավ, մեկ, տուն, ժիր: 4. Չորս որսորդ:
24. 2. Օրինակ՝ զատ, մատ, շատ, պատ, վատ:
29. 3. Հիվանդ – առողջ, գնալ – գալ, ազնիվ – անազնիվ:
30. 1. Խակ – հասած, չարաճճի – խելոք, համբերատար – անհամբեր, երիտասարդ – ծեր:
31. 2. Մուկ, ծառա, շվի, նամակ: 3. Ձուր, թուր, լուր, մուր, սուր, տուր: 4. Ապակի – լուսամուտ, ձմեռ – ձյուն, գիրք – տառ, ջուր – ձուկ:
32. 2. Փաթիլ: 3. Շուն:
35. 1. Հայ, հայերեն, Հայաստան, հայրենիք: 2. Առաջին: Այո: Ամռանը: Արև:

էջ

3. Կոճ, մուր, լոր, աման:
36. 2. Պատերազմ, հաղթել, փախչել:
37. 1. Հայաստան:
40. 1. Հովիվ: Բժիշկ: Շինարար: Հացթուխ: Ուսուցիչ: 2. Ձմեռ – դահուկ, աշուն – անձրև, ամառ – շոգ: 5. Ոչխար, կով, ծիտիկ, հավ: Ծաղիկ, քար, ծառ, փայտ: 6. Քարը՝ ամուր, ծանր, հսկայական, կարծր: Ծաղիկը՝ քնքուշ, անուշահոտ, դալար, ճկուն:
46. 2. Աղվես:
47. 1. Օրինակ՝ տիկնիկ, տիկնիկային, սովորող, սովորել, սոված, սիրուն, սիրելի, սիրամարգ, այնպես, այնքան:
50. 4. «Աջուձախ»: Բարձր, չորս, բարդի, բանալի, խաղալ, թութ:
51. 2. Կատու:
52. 1. Կողպեք – բանալի, մուկ – կատու, տանկ – տրակտոր, կրակ – ջուր: 2. Մուկ:
54. 4. Վագր:
57. 1. Այբուբենի տառերը գրված են մեկընդմեջ՝ թ, ի, խ...: 2. Տասներեք, տասնչորս, տասնհինգ...: 3. Աղ: 5. Դանակը մկրատից ավելի սուր է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ՀԱՅԵՐԵՆԻ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ 3

Իմ դասագիրքը – Վահան Գրիգորյան 4
Դպրոցի ճամփան – Հովհաննես Թումանյան . 5
Ո՞վ է բերում գարունը – Վաչագան Ա. Սարգսյան (Վաս) 6
Արայի մաթեմատիկան – Վաս 7
Աննան և սագիկները – Վարազդատ Բագրևանդցի 8
Շունն ու հավը – Երվանդ Պետրոսյան 9
Երգող բառը – Վաս 10
Անձրևը – Վաս 11
Գրիչ – Հովհաննես Թումանյան 12
Տառը – Վաս 13
Կախարդը – Վաս 14
Ծառի խնդրանքը – Պատվական Խաչատրյան 15
Մարտ – Հովհաննես Թումանյան 16

ԻՄ ԸՆՏԱՆԻՔԸ 17
Ո՞վ է ամենից շուտ արթնանում – Վաս 18
Ո՞Ի՞մ եմ ամենից շատ սիրում – Մարո Աբրահամյան-Թաթիկյան 19
Սիրում եմ – Էդվարդ Միլիտոնյան 20
Օգնել ու հոգնել – Էդվարդ Միլիտոնյան 21
Ինչը օգնեց մայրիկին – Լիպարիտ Սարգսյան 22
Թոռն ու աթոռը – Գուրգեն Գաբրիելյան 23
Մեծանում եմ – Գուրգեն Գաբրիելյան 24
Մե՞ծ եմ, թե՞ փոքրիկ – Սուրեն Մուրադյան ... 25
Ինչ կա որ – Վաս 26
Արջի ընկերը – Արմեն Շեկոյան 27
Քաղաքավարի տղան – Ս. Պոգորելովսկի 28
Լևոնի լողալը – «Ծիծեռնակից» 29
Կծած խնձոր – Արմեն Շեկոյան 30
Կարծում եք, թե կատա՞կ է – Սիլվա Կապուտիկյան 31
Շնիկը – Հենրիկ Սևան 32

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է 33
Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ (նկարաշար) 34
Հայոց լեզու – Պատվական Խաչատրյան 35
Իմաստուն մարդը – Վարդան Այգեկցի 36
Ջինվորիկի երգը – Վաս 37
Ծիծեռնակաբերդ – Վաս 38
Նկար ասֆալտին – Երվանդ Պետրոսյան 39
Հայաստանի քարերը – Էդվարդ Միլիտոնյան 40
Կարդա՛ – Ալեքսանդր Ծատուրյան 41
Հայը – Վաս 42

ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ 43
Կատակ – Վաս 44
Լուսիկի կատուն – Ռուբեն Ղարիբյան 45
Անխելք աղվեսը – Վաս 46
Փիսիկների գնդակը – Ռուբեն Ղարիբյան 47
Բկլիկ ձկնիկ – Խնկո Ապեր 48

ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ 49
Աղվեսն ու գայլը – Վարդան Այգեկցի 50
Թե ինչու կատուն ճաշից հետո է լվացվում .. 51
Մուկն ընկերանում է մկան հետ 52
Թե ինչու է նապաստակի շրթունքը ճաքած .. 53
Վագրն ու աղվեսը 54
Խելացի ծիտը 55
Քաջ Նազար (նկարաշար) 56
Ձվարճալիք 57
Ուլիկը Հովհաննես Թումանյան 58
Ով աշխատի, նա կուտի 60
Որոշ առաջադրանքների պատասխաններ ... 62

Բնագրերը ենթարկվել են որոշ փոփոխությունների, համապատասխանեցվել են գրական հայերենի կանոններին, առաջին դասարանցիների ընկալումներին:

ՎԱՉԱԳԱՆ ԱԴԻԲԵԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ 1

Խմբագիրներ՝ Հրանտ Վարդանյան
Արտաշես Թադևոսյան

Շարվածքը՝ Սվետլանա Այվազյանի
էջադրող՝ Միքայել Աբրահամյան
Ձևանմուշը՝ Վաչագան Ա. Սարգսյանի

«ՄԱՆՄԱՐ» հրատարակչություն
Երևան, Ղ.Փարպեցու, 9/7, հեռ. 53-79-81, 53-79-82
E-mail: manmar@manmar.am